

Կ. Կ.

18960

Առաքիւնի

Իշնուութեան

891.99

Կ-31

Բիֆիւ

891

5

4. ՓԱՓԱՁԵԱՆ

13.622

ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պատմա-աշխարհագրական և աշխարհագրական)

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Գ. Ռոտմիստովի

Тисогр. М. Д. Ротмислова, на Гол. пр. д. № 41.

1896

4415

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

944

891.99

Կ-31

4

ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պատճառագրեր, Պատկերներ և այլն)

1001
4389

2003

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Երանայր Կարամյան
Երանայր Կարամյան
Երանայր Կարամյան
Երանայր Կարամյան
Երանայր Կարամյան
6 8 10

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի

Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр. д. № 41.

1895



Дозволено Цензурою. Тифлисъ 5 Юля, 1895 г.

A ma chère amie

Miss Mary Seeley

je dédie ce livre.

Ա Ն Ն Ա

(ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

I

Եւ որովհետեւ խոստացել եմ քեզ, ահա պատմում եմ:

Գուցէ պատմածս քեզ աշխանդակ թիւի, սակայն պատմում եմ այն, ինչ որ եղել է եւ, Աստուած է վկայ, որ շատ էլ մի մեծ հաճոցք չեմ զգում զրանով. անցեալը, մանաւանդ հին վերքերը քրքրող անցեալը, պեղել՝ կէս վիրաւորել է նշանակում:

...Պարիզ էի գնում. այն ժամանակ ես իրաւաբանութեան ուսանող էի: Ամառը մեզ մօտ Կովկասում անցկացնելուց յետոյ հոկտեմբեր ամսին վերադառնում էի. դասախօսութիւնները շուտով սկսւելու էին եւ դրա համար էլ, հազիւ Վիէննայի մի կայարանը հասած, իսկոյն կառք բռնեցի դէպի միւս կայարանը գնալու. այդպէս անելու սովորեցի նաեւ մի մալարուս ընկերուհուս, որ նոր էր գնում Եւրոպա եւ Օդեսայում խնդրել էր ինձ օգնել իրեն:

Հասնելով Վեստբահնը ¹⁾, մի անկիւնում ցած զրի բռու, խնդրեցի ընկերուհուս սպասել և վազեցի տոմսավաճառի մօտ երկուսիս համար էլ տոմսակ առնելու:

Ահա այստեղ էր որ ծանօթացայ Աննայի հետ: Կռթնած տոմսավաճառի առջևի կայանքին սպասում էի իմ հերթին և մտքով Պարիզ էի. ոչ ոքի ուշադրութիւն չէի դարձնում. երբ տեսայ որ մէկը ինձ հարցնում էր՝

— Ներեցէք, պարոն, Պարիզ էք գնում դուք:

Դառնում եմ. մի ռուս օրիորդ էր, թեով յետո՞ւ կայանքին:

Երկարահասակ էր, սիրուն. կապտագոյն աչքերը խիստ արտայայտիչ էին, մի ամբողջ խոր աշխարհ կար նրանց մէջ... դէմքի վրայ խաղում էր մանկական խիստ քաղցր, գրաւիչ ժպիտ. թշերը կարմիր էին, գողարիկ: Մազերը կարճ և բաց թողած. երկու քունքերից դէմքի վրայ իջել՝ ծածանւում էին երկու խոպոպներ. գլխին ունէր մէջ տեղից ակոսացրած՝ տղամարդի մի փափուկ գլխարկ, որ սքանչելապէս սազում էր նրան:

Շարժւածքների մէջ թէև կար ռուս ինտելիգէնտ կնոջ, մանաւանդ ուսանողուհու ազատութիւն, բայց այդ անցն յախուռն, անբնական շարժւածքներ:

¹⁾ Վիեննայից դէպի արևմուտք տանող երկաթուղիների կապարանը:

րից չէր, որոնք իրանց այլանդակութեամբ ինձ միշտ անտանելի են եղել:

Նա պարզ էր և բնական. ոչ մի կապկաչին վարմունք, ձեռքերով օդ սղոցել, բարձրաձայն կեղծ քրքիջ, բռնազբօսիկ միմիկաներ—բոլորը՝ «ազատամիտ կին» ձևանալու համար... Նա զրանցից չուներ. ինչպէս յետոյ էլ նկատեցի, մինչև իսկ ոչ Ֆրագեօր էր և ոչ էլ ամենագէտ:

Յենւել էր կայանքին, ժպտում էր և պատասխանիս սպասում:

Նայեցի նրան մի վայրկեան. չեմ յիշում ինչեր անցան իմ մէջ, բայց զգացի որ այդ արարածը ձգում էր ինձ դէպի իրեն, հմայել էր ինձ:

— Այո, օրիորդ, ասացի ես, աղջկայ պէս կարմրելով—Պարիզ եմ գնում:

— Դուք ուսանող էք ինչպէս տեսնում եմ, խօսեց նա—իսկոյն գուշակեցի... մեր երկրիցն էլ էք, քանի որ ռուսերէն էք խօսում... ասացէք խնդրեմ, քանի արժէ արդեօք տոմսակը այստեղից մինչև Ժընէւ. գիտէք արդեօք:

— Ժընէւ... այո... 38 ֆրանկ արժէ, բայց դուք Պարիզ էք ուզում գնալ թէ Ժընէւ:

Մանուկի պէս գլուխը շարժեց, խոպոպիքը ետ ձգեց և իր ղիւթիչ ձայնովը պատասխանեց:

— Ըմ... այսինքն... գիտէք ինչ, իսկն ասած ես ինքս էլ դեռ չգիտեմ ուր գնալ:

Ինչ եղուպոսութիւն էր այդ. ահագին ճանա-

պարհից մինչև Վիէննա էր եկել և չգիտէր ուր գնալ:

Մօտեցայ նրան և խօսակցութիւն սկսեց մեր մէջ. սկսեցինք զբօսնել սրահի մէջ:

—Այսպէս ուրեմն, ասացի ես—չգիտէք դեռ թէ ուր էք գնալու:

—Ո՛հ այդպէս, պատասխանեց—գիտեմ, որ գնալու եմ բժշկութիւն սովորելու. բայց ահա հարցը... դ՞եք ինչ էք կարծում, ռոտեղ է լաւ զըր-ւած համալսարանը, ժընէւ թէ Պարիզ:

Զգիտէի ինչ պատասխանել. մի րոպէ լուռ կեցայ. բժշկական ուսանող չէի և ժնէւի մասին էլ համարեա թէ ոչինչ չգիտէի:

—Գիտէք ինչ, պատասխանեցի վերջապէս—դուք մի դժուար հարց տւիք. իմ կարծիքով միշտ Պարիզումն է, ուր ամեն ինչ լաւն է... բայց ես ոչինչ չգիտեմ բժշկական ֆակուլտետի մասին... գիտեմ միայն որ ունենք աշխարհուշակ պրոֆէսորներ, որ պիտիք են Շարկօ, Բիքօ, Պիէր Ժանէ...

Կարծես թէ ուզում էի համոզել որ ինձ հետ գար: Այդպէս էլ էր. չէի ուզում որ հեռանար ինձ-նից: Իմ առարկութեանս վրայ օրիորդը սկսեց մտածել, իսկ ես, զգալով յանկարծ որ կարող է նա գուշակած լինել իմ «յետին միտքը», ուղեցի սխալ ուղղութեան վրայ գնել նրան և մի քիչ էլ ինքս ինձ մօտ արդարացնել:

—Սակայն օրիորդ, աւելացրի քիչ յետոյ—դուք

գիտէք էլի, ես չեմ ուզում պատճառ դառնալ, որովհետեւ... ասում են որ Ժընէւի համալսարանն էլ լաւ է... բայց Պարիզը, գիտէք... Պարիզը ուրիշ բան է. .

Աշխատում էի որչափ կարելի էր անտարբեր ձեւանալ:

—Իսկ եթէ, ասաց սառնութեամբ—ես ուզում եմ ուսանել. ես տուրիստ չեմ:

—Ուրեմն Պարիզ եկէք, վրայ տւի իսկոյն—լմուռնամ ասելու նաև, որ Պարիզումն էլ էժան կարելի է ապրել... այո՛, բաւական էժան:

—Օրինակ քանիսով կարելի է ապրել, հարցրեց Աննան:

Անունը Աննա էր. այդ ես իմացայ, երբ սկսեցինք զբօսնել. նա անւանեց իրեն և իմ անունս էլ ինքը հարցրեց:

—Այսպէս, պատասխանեցի նրա հարցին—ամսական ամենաքիչը 50 ռուբլի պէտք է, մօտ 125 ֆրանկ:

—Օ՛, մի՞թէ, բացականչեց նա և կանգ առաւ: Կարծեցի թէ ուրախացաւ էժանութեան վրայ. ես էլ ուրախացայ, մտածելով որ ահա համոզեց ինձ հետ գալու:

—Ես կարծում էի, աւելացրեց նա—որ ամսական 30 ռուբլիով կարելի է ապրել, այդպէս էին ասել:

—Օ՛, գոչեցի ես—30 ռուբլի, այսինքն 75 ֆրանկ և ոչ իսկ 100—դա անկարելի է:

— Եւ սակայն ինձ այդպէս ասացին, վերջացրեց նա տխուր շեշտով— ինձ ասացին որ Պարիզումն իսկ այդքանով կարելի էր ապրել:

— Շատ կարելի է, մեմուացի ես— եթէ նեղ ապրել:

— Ուրեմն կարելի է, ժպտեց նա երեսիս նայելով— ես շուայլ չեմ, շատակեր էլ չեմ. ես միայն սովորել եմ ուզում:

Լռեցի: Վճռողապէս ասեա՛ծ այդ խօսքերը նրա կամքի ոյժի չափն էին ցոյց տալիս և ես հիացել էի:

Նա էլ լռեց և մտածութեան մէջ ընկաւ: Սկսեցի աչքիս տակով քիչ զննել նրան: Սիրուն գողտրիկ դէմքի վրայ, ունքերի մէջ տեղում, գոյացել էին երկու ուղղահայեաց ակունքներ, իսկ կապտագոյն բիբերը բարձրացել: Այդպէս էր մտածում Աննան:

Նայում էի և զննում նրա մետաքսանման գորշ մազերը, սիրուն վայելուչ հասակը, վարդագոյն աննման շրթունքները, որոնք վարդի թերթերունքների պէս բացւել՝ երկու շարք առողջ ատամներ էին ցոյց տալիս:

Լիովին գրաւվում էի նրանով, զգում էի որ այլ ևս նրանից բաժանւել չէի կարողանալ. և— ո՞վ գիտէր— պատրաստ էի ինքս ժընէլ գնալ, եթէ նա Պարիզ գալու չլինէր:

Մի քանի րոպէ մտածութիւնից յետոյ, յանկարծ կանգ առաւ նա, արագութեամբ հանեց գր-

պանից դրամապանակը, որ լիքն էր դրամով, տւեց ինձ և ասաց.

— Խնդրեմ երկու տոմսակ գնեցէք մեզ համար:

— Պարիզի:

— Այո, Պարիզի. մէկն էլ ընկերուհուս համար, որ ահա ցածում սպասում է. առէք և բերէք ինձ, ես այնտեղ կը լինեմ:

Ընկերուհին Վարշաւայի մի կաղ ռսուհի էր (աւելի շուտով հրէուհու էր նման). դժգոյն-հիւանդոտ, ձկան պէս լռակեաց. բացի պէտք եղած, բուսական կեանքի վերաբերեալ բառերից, նա ոչ մի խօսք չէր արտասանում. ամբողջ օրը վագոնի լուսամտի մօտ նստած, լուռ լսում էր մեզ, դուրսն անգամ չէր նայում մեզ հետ, երբ մենք յաճախ հիանում էինք լեռնային տեսարաններով: Խելօք աչքեր ունէր, որոնք անգոյն և անփայլ՝ ծածկւում էին սպիտակ ակնոցի տակ: Սկզբում պատկառում էի այդ աղջկանից. ինձ թւում էր գիտուն. որովհետեւ ես յաճախ մտածել եմ, որ ճշմարիտ գիտունները նրանք են, որոնք ամենից աւելի լռել գիտեն. բաց, այդպիսի դէպքում չէ՞ որ համբերը գիտուններ են դուրս գալիս:

Մենք, ես ու Աննան, ոչ համբեր էինք և ոչ էլ գիտուններ, այնպէս որ ամբողջ ճանապարհի ընթացքում խօսակցում էինք: Ինչի մասին ասես որ չխօսեցինք: Սկսած սոցիոլոգիականից մինչև գիտական հոգեբանութեան ամենախոր հարցերը, մանա-

ւանդ սպիրիտիզմի մասին: Բաւական վիճեցինք այն հարցի մասին, թէ ի՞նչ դեր են խաղում բնական գիտութիւնները սոցիոլոգիական հարցերի մէջ: Ան- նան նրանց դերը ըմբռնել էր կարողանում (ես չէի զարմանում, որովհետեւ համալսարանի մէջ աչդպիսի պրոֆեսորներ անգամ կային): Ես աշխատում էի նրան ըմբռնել տալ, խօսելով էւոլիւցիայի, դարւի- նիզմի, լամարիիզմի և այլն մասին:

Աննան շատ կարգացել էր, բայց հարցերից ընդհանրացումն զոյացնելու դեռ չէր հասել. մի քիչ էլ սխալ ուղղութեամբ էր քայլել: Ճշտութիւնը նա նշմարում էր. բաւական էր նրան մի քանի կտրուկ հարցեր տալ, բերել նրան ճանապարհի վրայ, մի մղում (impulsion)—և ահա այդ հրաշալի սրա- մոտ թեամբ աղջիկը այնպիսի խորթութեանց եզրա- կացութիւնների, այնպիսի առողջ վճիռների էր հասնում, որ ինձ զմայլեցնում էր: Նրա պակասու- թիւնը միայն այն էր, որ հեշտութեամբ էր կոր- ցնում մտածութեան թելը, եթէ մի գիպւած խախ- տէր նրան: Այդ իսկ պատճառով էլ նա սատոիկ նեղանում էր, եթէ ես միջահատում էի նրա դա- տողութիւնը կամ կամ չէի կարողանում իսկոյն ըմ- բռնել թէ ի՞նչ է ուզում ասել:

— Խնդրեմ, ասում էր նա նեղացած — գերմա- նացոց պէս եղէք, մի՛ միջամտէք ինձ և սպասեցէք մինչև որ ես կատարելապէս վերջացնեմ ասելիքս:

Բայց ինքն իսկ չէր պահպանում իր խրատը.

երբ ես էի խօսում, անդադար ստիպում էր ինձ՝ ներողամիտ լինել իր վերաբերութեամբ:

Մեր խօսած լեզւի յասկութիւնն էր դրա պատ- ճառը. իսկոյն հասկանում էինք միմեանց, դեռ նա- խադասութեան կէսը չհասած. Գերմանացիք սպա- սում են մինչև վերջացնելը, որովհետեւ ուրիշ կերպ անել չեն կարող. նրանց լեզւում նախադասութիւնը կարող է լիովին հակառակ մտքի փոխել՝ վերջումը մի խօսք միայն դնելով. մի nicht կամ gehabt բա- լական է որ ամբողջ նախադասութեան դրական միտքը բացասականի կամ ներկայ ժամանակը ան- ցեալի փոխի:

Այսպէս, Աննայի հետ ամբողջ օրը խօսում էինք: Աւելի շատ խօսում էր նա քան թէ ես. պատ- մում էր ամեն բան. իր երկրի մասին, իր մտա- դրութիւնների մասին. յետոյ հարցնում էր ինձ Պա- րիզի ուրս ուսանողների կեանքը և՛ երբ իմացաւ որ ես հրէայ չեմ, այլ հայ, ծիծաղելով ասաց.

— Ես մի քանի հայ ուսանողի եմ ճանաչում Մոսկւայում. նրանք լաւ մարդիկ չէին. ինձ ասել են որ հայերը առհասարակ սատոիկ վաճառական, զծուծ մարդիկ... աշխարհիս երկրորդ տեսակ հրէ- աները... խնդրեմ չնեղանաք, ես իմ լսածս եմ մի- այն ասում... բայց ես տեսնում եմ որ դուք լաւ մարդ էք... չեմ շողոքորթում:

Երևի որ իսկապէս ես նրան լաւ էի թւում, որովհետեւ ոչ միայն ճանապարհին չբաժանեց ինձ.

նից, այլ և Պարիզ հասնելիս, երբ նրան առաջարկեցի իմ տան մէջ գտնուող սենեակը վարձել, ընդունեց:

Տեղաւորւելուց յետոյ ամբողջ օրը այգայիսով կամ ես նրա սենեակումն էի և կամ նա իմ. խօսում էինք, հետզհետէ աւելի և աւելի մոեքրմանում. կարգում էինք միասին, վիճում, ժողովների և երեկոյթների միասին գնում, համալսարանում նա իմ դասերիս յաճախում էր ու կողքիս նստում, ես նրա դասերին յաճախում էի և կողքին նստում:

Մի խօսքով՝ սիրում էինք միմեանց, բայց դեռ ոչինչ չէինք խոստովանւել:

Եւ երբ յիշում եմ թէ որպիսի այլանդակ եղաւ մեր խոստովանութիւնը...

Ես հրաժարւում եմ այսօր այլ ևս գրել: Ի՞նչ օգուտ քրքրել հին վէրքերը. ինձ պէտք է մոռանալ նրանց և ես աւելի պեղում եմ յիշատակներս:

Մի երազ էր որ տեսայ. այժմ, զարթոնն եմ արդեօք... չգիտեմ այդ... տանջւում եմ... յիշում եմ Աննային, յիշում եմ այդ հրաշալի հրեշտականման աղնիւ աղջկան, յիշում եմ նրա և իմ տանջանքները և... ներքի ինձ, բարեկամս, որ գրիչս ցած դնեմ այլ ևս... գոնէ այսօրւայ համար:

II

Յուրտ է. ձմեռնային մի երես կտրող քամի է բարձրացել. ֆրանսերէն դրան կոչում են bise. — իս-

կապէս որ բիզ է, ծակծկում է մարմինը. երբեմն թւում է թէ սառույցի կտորներով ապտակում են քեզ:

Վառել եմ վառարանս և դուրս չեմ գալիս. կարգում եմ, երազում եմ կրակի բոցի առաջ, բաղկաթոռիս մէջ ընկղմած:

Աննային եմ մտածում... չշարունակե՞լ արդեօք գրելը:

Որքան դժւար բան է եղել խոստում կատարելը. եթէ խոստացած չլինէի, մի՞ կարծիք թէ կ'ուզենայի խօսել-գրել:

Բայց ահա յիշում եմ այսօրւայ պէս այն երեկոն, երբ կատարեց խոստովանութիւնը:

Ժամ 7-ն էր. այսօրւայ պէս մի սառը քամի էր փչում դրսում. ես նստել էի վառարանիս մօտ, աչքերս կրակին յառած մնացել էի, երբ դուռը մեղմութեամբ բացւեց:

Աննան էր. մտաւ, գլխարկը չհանած մօտեցաւ վառարանին ու ասաց.

— Լաւ տաք է այստեղ, սակայն գնանք ինձ մօտ, տանտիկինը անշուշտ վառած կը լինի իմ վառարանն էլ:

Յետոյ դուրս եկաւ. ես էլ ետեկից: Երբ իր սենեակը մտանք, գլխարկը հանեց, վառարանի մէջ փայտ դրեց, յետոյ զրպանից դուրս քաշելով սեղանի վրայ ձգեց Մոսկւայից ստացած 10-րդ նամակը: Մի ամիս էր որ Պարիզ էր և 10-րդ նամակն էր որ

ստանում էր նա միւսնոյն անձից... և պարբերաբար,
շաբաթը երկու անգամ, ամէն անգամ երկու կամ
երեք թերթերից բաղկացած:

Մինչև այդ օրը չէի համարձակել հետաքրքր-
ւելու, թէև մի խուլ կասկած կոծում էր ուղեղս.
երբ 10-րդ նամակը ձգեց սեղանի վրայ, այլ ևս չդի-
մացայ և հարցրի դողդոջուն ձայնով

— Լաւ շուտ շուտ նամակներ էք ստանում.
Ամենից է արդեօք. հօրից:

Մէջքը դարձրած, պահարանի վրայ մի զիրք
էր փնտռում իմ այդ հարցը տւած ժամանակ. երբ
լսեց, ուժգնութեամբ դարձաւ, թափանցիկ հայեաց-
քով գննեց ինձ և ասաց.

— Իմ մի բարեկամից է:

— Բարեկամ, ասացի ես աշխատելով անվրդով մնա
— տարօրինակ բարեկամ... բարեկամները այդքան ջա-
նասէր չեն լինում... ինչ որ սիրոյ հոտ է զալիս զրանից:

Ծիծաղում էի այդ ասելու ժամանակ, իր սխալը
հասկացող մարդու մի բռնաղբօսիկ ծիծաղով: Նա
մրսած մատներով խոսուպիքը ետ տւաւ, մօտեցաւ
նստեց սեղանի մօտ, կոթնեց նրա վրայ, նայեց
դէմքիս և իւրաքանչիւր բառը շեշտելով՝ ասաց.

— Իսկ եթէ այդպէս լինէր. միթէ դա յանցանք
կը լինէր:

— Ինչո՞ւ յանցանք, ժպտացի ես բռնաղբօսիկ կեր-
պով — երբէք... բայց ո՞վ է այդ պարօնը, ձեր նշա-
նան է, չէ:

Չպատասխանեց իսկոյն, վարանում էր. նամակ-
ները ժողովելով շարտեց պահարանի վրայ, յետոյ
աչքը վառարանի վրայ յառեց և ասաց կուլիտ
ձայնով.

— Ամուսինս է... բայց ձեզ ինչ... այդ ձեր
գործը չէ:

Վեր թռայ տեղիցս, սկի չէի սպասու-մ մի
այդպիսի պատասխանի և չգիտէի հաւատալ թէ ոչ:
Այդ միջոցին նա մէկէն ի մէկ դարձաւ ու աչքերը
սեւեռեց վրաս:

— Ուրեմն դուք ամուսնացած էք, թո՞թովե-
ցի ես:

— Գրեթէ, ասաց խուլ ձայնով. յետոյ լամպը
մօտ քաշեց, բուռն մի ճիգ գործեց, թոթուեց իրան,
կնճռեց ճակատը և յարեց վճռապէս.

— Լսեցէք ինձ... ինձ թւում է որ դուք ինձ
սիրում էք... արդեօք ճիշտ է նկատածս:

Ձէի սպասում այս անակընկալ հարցին և կար-
կամեցի. չկարողացայ մի բառ իսկ արտասանել:

— Ես այդ տեսնում եմ, շարունակեց նա — և
չեմ ուզում ձեզ տանջել. քանի շուտ է պիտի
մեռցնել ձեր մէջ ծնող այդ զգացումը. ես կարող
եմ ձեզ հետ բարեկամ, շատ մօտ և լաւ բարեկամ
լինել, բայց սիրել... ոչ. ես ամուսնացած եմ, ես...
մի խօսքով ձեզ չեմ կարող և չեմ ուզում սիրել:

Ասաց, բարձրացաւ տեղիցը, հեռացաւ դէպի
մի մութ անկիւն և այնտեղից, սխեց գիտել ինձ



կիսովին գլուխը թագցրած իր ուսի վրայ ծածկ-
ւած շալում:

Այդ յայտնութիւնը աջնպէս խիստ ներգործեց
վրաս, որ վերկացայ երեբալով, կռթնեցի դարանին—
ցած էի ընկնում—դուռը բացի և չգիտեմ ինչպէս
հասայ սենեակս և ինձ ձգեցի բազկաթոռիս մէջ:

Ոչ մտածել էի կարողանում և ոչ էլ շարժելու
ցաւ անգամ էի զգում, հարւածը շատ խիստ էր
եղել և մի առժամանակաց համար թմրեցրել էր
ջղերս:

Բայց երբ կէս ժամ անցաւ և քիչ-քիչ զգալ
սկսեցի, սարսափելով տեսայ որ պաշտում էի Ան-
նային, որ առանց նրան այլ և ինձ ապրել անհնար
էր և որ... ես մի թշուառ էի, մի դժբաղդ... զգա-
ցածս ցաւը այնքան խիստ էր, դառնութիւնը՝ առատ
և յուսահատութիւնը՝ կատարեալ...

Մթան մէջ նստած, չէի ապրում այլ ևս,
կսկիծ էի զգում, լալ չէի կարող, լալ—մի քիչ մխի-
թաբւելու համար:

.....
Յանկարծ զգացի որ ճրագս վառւեց, յետոյ եր-
կու թւեալ գրկեցին ինձ և մի ջերմ, շատ ջերմ
համբոյժ սթափեցրեց ինձ:

Աննան էր: Գրկել էր վիզս, գլուխը ետ ձգած
և աղաչաւ որ կերպարանքով չոգել էր առջևս...

Աննա, դռնեցի ես վայրենի ձայնով—այդ դժու-
եա... միթէ ինձ սիրում ես ուրեմն:

Ինձ էր նայում դառնութեամբ, մի յանցանք
գործողի ակնարկով. կրճտեցնում էր ատամները, մո-
տենում էր ինձ ջղապանութեամբ:

—Ո՛չ, ո՛չ, մոմաաց նա, քեզ էլ չեմ սիրում,
բայց չեմ ուզում որ քեզ չարչարես և ինձ էլ
տանջես... օ, դու ինձ շատ, շատ ես տանջում...

—Ինձ չեմ սիրում, բացականչեցի—ուրեմն ի՞նչ
գործ ունիս այստեղ. հեռացիր, գնա և թող ինձ
կրեմ իմ վիշաք:

Գրկեց ինձ, լնկաւ կրծքիս վրայ և համբուրեց:
Համբուրում էր ու կրկնում՝

—Ձկարծես սակայն որ քեզ սիրում եմ, ո՛չ...
ո՛չ քեզ և ո՛չ էլ նրան. ես ոչ ոքի սիրել չեմ ուզում:

Ձէր էլ լաց լինում, բայց տանջւում էր ամբողջ
եութեամբ: Դէմքը փոփոխւում էր, աչքերը պատ-
ւում, ջղաձգութեամբ գալարւում էր գրկիս մէջ,
քաշում էր ինձ դէպի իրեն, մոտենում շրթունք-
ներին, կատաղի համբոյժներ էր դրոշմում նրա
վրայ... եթէ չէի հարցնում թէ սիրում էր ինձ,
թողնում էր որ իրեն գգւէի, իսկ եթէ հարցնում
էի—իսկոյն ետ էր մղում ինձ և գոչում որ չէր
սիրում ինձ, չէր ուզում և չէր կարող:

Եւ սակայն տանջւում էր ծնկներին մօտ, գա-
լարւում գրկիս մէջ: Երբէք մի կին զրանից աւելի
յայտնի նշաններ չէր կարող արտայայտել ջերմ, տըր-
փոտ կրքի—սիրոյ:

Իսկ ես մի ծայրայեղութիւնից միւսն էի ընկ-

նում, յոյս ստանում, յուսահատ լինում: Իր երկու փոքրիկ ձեռքերով բռնում էր թշերս, երկար, երկար նայում աչքերիս, սիրալիր կերպով զննում կէմքիս բոլոր մասերը, յետոյ յանկարծ կատաղի կերպով ընկնում գիրկս և... այնպիսի ջերմ համբույրներ էր տալիս ինձ, որ սառսուռ էր ազդում ամբողջ մարմնիս... Այդ բոլորի միջոցում յանկարծ թողնում էր կիսատ համբույրը, ետ էր քաշւում, խլոււմ-հեռանում գրկիցս, ճակատը շփում, ունքերը կիտում, նայում էր շուրջը նոր զարթնողի աչքերով, յետոյ դառնում ինձ և գոչում՝

— Հեռացիր, գնա... կարծում ես թէ սիրում եմ քեզ, սխալւում ես... այո՛, ես քեզ չեմ ուզում:

Ընդհատում էր, ձեռքը կոկորդին տանում, օձիքը քաշում խեղտողի պէս, ինձ նայում մի վայրկեան, յետոյ յանկարծ ջարձակւում վրաս, բռնում թևերիցս, մի րոպէ դէմքս զննում և նորից համբույրեր, նորից...

Մի, Աստուած իմ, որպիսի նեարդացին հիւանդոտ տեսարաններ էին այդ բոլորը:

Մի ժամ ամբողջ Աննան տանջւեց այդպէս, տանջեց ինձ իր հետ և միշտ կրկնեց որ չէր սիրում ինձ, որ չէր ուզում սիրել:

Վերջապէս քիչ հանդարտւեց, յոգնածի պէս ընկաւ գիւանի վրայ, քաշեց ինձ իւր կողքին, բըռնեց ձեռքս և ասաց մեղմ, դադարածի ձայնով.

— Լսիր, ճշմարիտ եմ ասում, գիտե՞ս. ես քեզ սիրել չեմ կարող:

— Որովհետև ուրիշի ես սիրում, այնպէս չէ, դատեցի ես կծու կերպով:

Յնչւեց, դարձաւ և այնպէս նայեց ինձ, որ քիչ մնաց չոգէի և ներողութիւն խնդրէի կասկածիս համար: Մտեցայ, խանդաղատանօք գրկեցի և քաշեցի դէպի ինձ:

Ետ մղեց, տանջւողի պէս կնճռեց դէմքը, բարձրացաւ տեղից և մօտ զնաց լուսամուտին, այնտեղ դէմքը կպցրեց լուսամուտի ապակուն և մնաց պահ մի:

Սկսել էր ձիւնել դրսում, քամին նրանից խոշոր հատեր բերում շարտում էր ապակիների դէմ:

— Այո՛, մռնալաց նա առանց ինձ նայելով — չեմ ուզում...

Յետոյ թողեց լուսամուտը, մօտ եկաւ սեղանին և շարունակեց.

— Եթէ քեզ սիրեմ, նա կը մեռնի, անշուշտ կը մեռնի... ապրել չէ կարող այլ ևս, այդպէս է նա, հասկանում ես:

— Հասկանում եմ, պատասխանեցի ես — ահա թէ բանը ինչու՞մն է. նրան խօսք ես տւել և չես ուզում խախտել խոստումդ. ապա թէ ոչ՝ սիրոյ մէջ իրեն զոհել իր չսիրածին!

— Ո՞վ ասաց որ ես նրան չեմ սիրում, միջահատեց Աննան բարկութեամբ — նախ թող այդ կծու հեղուկութեան վիշտը, զգւելի է... և երկրորդ ես չեմ ասել որ նրան ատում եմ. ճշմարիտ է, ես նրան չեմ սիրում այնպէս, որպէս... բայց չեմ ասում, չէի

ուղիլ մանաւանդ որ նա մեռնէր... իսկ նա կը մեռնի եթէ ես ուրիշին սիրեմ. արդէն տանջուում է երբ նկատուում է որ ես այլ ևս չեմ ուզում նրան:

Նստեց, շալովը փաթաթեց մի թւը, առաւ մի գիրք ու սկսեց չղաջնութեամբ թղթատել նրան. յետոյ կանգ առաւ ու շարունակեց կցկտուր կերպով ու հետզհետէ յուզւող ձայնով:

— Երկու տարի է, ասաց նա— երկու տարի, որ պաշտում է ինձ... այո՛, այդպէս սիրել անհնար է, մի՛ երազիլ որ այդքան դու կարող ես ինձ սիրել. առանց ինձ ապրել չէ կարող, շնչել չէ կարող... Կազան ¹⁾ էր գնացել մի վեց ամիս և շաբաթը երկու անգամ երկար նամակներ էր գրում... այդքան ջերմութիւնը սառեցնում է ինձ... քանի սառն եմ վարւում, նա այնքան աւելի պաշտում է ինձ... կը մեռնի, անշուշտ եմ որ կը մեռնի, եթէ իմանայ որ ուրիշի եմ սիրում... հպատակում է ճակատադրին, եթէ իրենից սառում եմ, բայց կը սպանեմ նրան, եթէ սիրեմ ուրիշի... այդ նա չէ կարող տանել, լաւ գիտեմ:

— Ուրեմն իրեն չես ասել, միջհատեցի ես— չէ՛ որ այլ ևս չես սիրում իրեն. այդ յայտարարութիւնը գոնէ նրա անձնասիրութիւնը գրգռելով կարող կը լինէր մոռացնել տալ սէրը, այդ յայտարարութիւնը նոյնպէս քեզ ազատ կը կացուցանէր...

¹⁾ Քաղաք Ռուսաստանում:

— Ախ, ինչեր ես ասում... ասել նրան. ինքը լաւ է զգում, տանջւում է, խիստ տանջւում... ամեն նամակի մէջ գանգատուում է որ սառն եմ դէպի իրեն, որ սպանում եմ իրեն իմ բացակայութեամբ, իմ սառնութեամբ... ճառանց քեզ, ասում է նա, ամեն ինչ չոր է, չոր և դատարկ. գանգատուում է որ չգիտէ թէ ինչ յանցանք է գործել իմ դէմ... յանցանք... ինչ յանցանք, հրեշտակի պէս տղայ է, ազնիւ, մաքուր... չգիտեմ, ես էլ չգիտեմ, թէ ինչո՞ւ այլ ևս չեմ սիրում նրան:

Ասաց Աննան և գլուխը խոնարհեցրեց տխրութեամբ ձախ թւով լայն բացարած շալի մէջ: Այդպէս նա մնաց լուռ մի քանի րոպէ, յետոյ գլուխը հանեց և շարունակեց.

— Գուցէ միմեանց հետ շատ ենք եղել— նրա համար... ասաց աչքը ծրագին յառած— գուցէ սովորական է եղել... անազնուութիւն է արածս, գիտեմ, բայց ուղղակի նրան ասել որ ուրիշին եմ սիրում— այդ չեմ կարող, գիտեմ որ կը սպանեմ նրան: Երկու յոյսով այդ չեմ անում. մոռնում եմ որ գուցէ ապագայում ես կարող լինեմ էլի սիրել նրան, երբ բաւական ժամանակ հեռու մնամ նրանից... միւս յոյսս այն է, որ նա ինքը գուցէ ինձ հեռու ունենալով՝ մոռանայ, վարժւի ինձ կորցնելու մոքի հետ և հաշուի ճակատագրի հետ... այո՛, երկուսից մէկը: Երբեմն ուզում եմ, կամենում եմ նորից սիրել նրան, բայց չեմ կարողանում, սառնութիւն եմ

զգում դէպի նա... կարծես կշտացել եմ նրանից ու
չգիտեմ, զուցէ մի տարի այստեղ մնալուց յետոյ
սկսեմ սիրել նրան. սիրելու աղաչ, սիրուն, ազնիւ,
զարգացած... միայն թէ շատ յաճախ է ինձ գրում
և յաճախ է խօսում իր զգացմունքների մասին...
ձանձրացնում է, վախենում եմ որ այդպիսով լի-
ովին արգելք լինի ինձ վերստին սիրելու իրեն:
Մնում է շատ սակաւ գրել նրան և սառը գրել...
այո՛, այսպէս պիտի անել:

— Իսկ եթէ ուղղակի, կտրուկ կերպով մերժէք
նրան, դիտեցի ես— դա չի սպանիլ նրան. սպանում է
անորոշութիւնը, իմ կարծիքով:

— Ե՛հ, պատասխանեց Աննան արհամարհան-
քով— այդ ճիշդ չէ. մարդս գերադասում է աւելի
անորոշութեան մէջ մնալ այդպիսի դէպքերում:
Ճիշտ է, որ քանի անորոշութեան մէջ է, ձգտում է
որոշութեան մէջ մտնելու և տանջւում է առաջին
գրութիւնից. բայց երբ ամեն ինչ որոշւում է և
այդ որոշութիւնը նրա համար անսպասու է լինում,
այն ժամանակ նա հազար անգամ երանի է տալիս
իր նախկին անորոշ գրութեանը, ուր նա գտնէ յոյս
կարող էր տաճել... նոյն իսկ եթէ այդ յոյսը յա-
ւիտենապէս միմիայն յոյս մնար... այո՛, յոյսն է,
յոյսը միայն որ այս կեանքը մեզ փոքր ինչ տանելի
է անում:

Պահ մի լռեցինք երկուսս էլ. նա գիտողութեամբ
գլուխը ձեռքին կռթնեցրած, նայում էր ճրագին:

Քիչ լռութիւնից յետոյ, վստահութեամբ և
մեղմ ձայնով յարեցի.— իմ կարծիքով երբ այլ ևս
չես սիրում մէկին, պիտի յայտնել: Ինչո՞վ մեղաւոր
ես, եթէ այլ ևս չես սիրում նրան...

— Դու ինձ չես հասկանում, զոչեց Աննան
նեղացած ձայնով— Կոյեան գիտէ որ ես իրեն չեմ
ատում, որ ես կուգէի սիրել իրեն, բայց ես ինքս
տեսնում եմ որ նրան սիրելու զգացմունք չկայ
իմ մէջ այլ ևս... ապագայում— չգիտեմ. գիտեմ
միայն, որ նա ինձ գժի պէս է սիրում... մի քայլ
չէ ուզում անել առանց ինձ. . . նրան ասել որ ոչ
միայն յոյսը կտրի որ իրան սիրելու եմ, այլ և որ
ուրիշին եմ սիրում... ոչ, հազար անգամ ոչ, նա
չի դիմանալ դրան, իսկոյն կը մեռնի... Թոքախտը
վաղուց է որ պակասեցնում է նրա օրերը...

III

— Թոքախտը վաղուց է որ կրճում է նրա օրերը,
ասաց Աննան տխուր, խորապէս մեկամաղձոտ շեշտով:

Յուզւեցի: Թոքախտաւորը մի այնպիսի պատ-
կառելի դժբախտ է, որին պարտաւոր են խնայել
բոլորը: Ընկածին այլ ևս չեն զարնում:

— Այո՛, շարունակեց Աննան— առանց այն էլ
նա զգում է որ էլ չեմ սիրում իրեն և մաշւում
է, մաշւում:

Ասաց, մեքենայօրէն բարձրանալով մօտեցաւ
ինձ, կանգնեց առջևս, ժպտեց դունաթափ ժպտով,

յետոյ բռնեց ձեռքս և սկսեց սեղմել: Թոյլ տւի, ես էլ սկսեցի ժպտել:

— Ինչո՞ւ ես ժպտում, ասաց նա ջղաձգութեամբ ձեռքս սղմելով— չե՞ս հաւատում, կարծում ես թէ դիտմամբ եմ այդպէս ասում:

Թողեց ձեռքս և նստեց կողքիս:

— Ասուած իմ, գոչեց նա— դու ինձ չես էլ հաւատում...

Որպիսի յուսահատ կերպով արտասանեց նա այդ բառերը, յետոյ յախուռն կերպով ընկաւ առջևս և դէմքը թաղցրեց թւերիս վրայ:

Կռացայ, բռնեցի գլուխը. շրթունքներս կպցրի մազերին և ասացի.

— Իմ խեղճ Աննա:

Յնցւեց, վեր թռաւ:

— Ի՞նչպէս, գոչեց նա— խեղճ... ուրեմն դու ինձ խղճում ես այժմ էլ: Դու ինձ չես հասկանում, ո՛չ, դու այն չես ինչ որ կարծում էի:

Ես ժպտացի հեղնօրէն, ընդհակառակն հասկանում էի իրեն իմ կարծիքով և կարծում էի այն ժամանակ, թէ այդ ջղային աղջկայ արածը ո՛չ այլ ինչ էր եթէ ոչ կոկետութիւն:

Բայց նա դողում էր. ջղային մի տենդ պաշարում էր ամբողջ օրդանիզմը: Մօտեցաւ նա վառարանին. քանի տաքանում էր, այնքան աւելի ակներև կերպով դողում էր. ատամներն անգամ մեծահնչիւն կերպով կարկափում էին:

Փաթաթւում էր շալով, մօտենում էր կրակին:

Յուրտ է... մրմռաց նա— ցուրտ... զարմանալի է, այդ որքան դողում եմ... և սակայն դու դեռ ինձ չես հասկանում... Ասուած իմ:

Մի պտոյտ գործեց վառարանի շուրջը. յետոյ կանգ առաւ. դողում էր սաստիկ: Վերջ ի վերջոյ մի քանի անգամ ձեռները կրակին տարաւ ու երբ մի քանի անգամ ունելիքով խառնել էր կրակը, դարձաւ կիսովին ինձ ու ասաց.

— Ժամը քանի՞սն է:

Տասներկուսը... թէյ կուզես:

— Ո՛չ, գնամ պառկեմ: Թեղ տուր ինձ, դողում եմ. դու ինձ պիտի հաւատաս, չէ որ ես քո մօտ երբէք չեմ ստել... Թեղ տո՛ւր, այդպէս. այժմ քնանք ինձ մօտ, բայց շուտով վերադարձիր, ես ուղում եմ պառկել... իսկ դու ինձ անպատճառ պիտի հաւատաս:

Թեւ տւի նրան և տարաց իր սենեակը՝ աչնտեղ նա, փոխանակ թեւ թողնելու, սեղմեց և ասաց մրմնջելով.

— Մնն, դեռ մի՛ գնալ... նստիր ինձ մօտ, ահա այստեղ... մօտ նստիր. տուր ձեռքդ... օ, տաք ես դու, իսկ ճակատդ... էլի տաք է, ուղեղդ շատ է գործում:

Նստեց դիւանի վրայ, նստեցրեց ինձ կողքին, բռնեց ձեռքս, շօշափեց ճակատս, յետոյ երկար նայեց դէմքիս, կաթոգին ժպտեց և կամաց մօտ եկաւ.

գլուխը իջեցրեց թևիս վրայ ու մրմռաց հազիւ լսելի ձայնով.

— Օ'... մրմռաց նա— Աստուած իմ, որպէս լաւ է, այո... էլ չեմ դողում. դու շատ լաւ, շատ լաւ տղայ ես... խելօք... ես կ'ուզէի քեզ համբուրել, քեզ սիրել...

Կռացայ դէպի նա և ուզեցի համբուրել:

Յանկարծ ցատկեց, ետ մղեց ինձ ու գոչեց.

— Օ', ո՛չ, ետ գնայ... ես չեմ կարող:

Սկսեց հրել ինձ ու ժգնութեամբ և կատաղութեամբ շարունակեց:

— Դուրս գնա... դուրս գնա այժմ, թող ինձ, գնա:

Դուրս գնացի— չգիտեմ ինչու: Աննան հիւանդ էր, պէտք էր նրան թողնել— այդպէս դատեցի այն րոպէին— գուցէ սխալ գործեցի, բայց դուրս եկայ և տանտիկնոջը ուղարկեցի նրա մօտ:

Տանտիկինը հանւեցրեց նրան ու պառկեցրեց, և երբ դուռն ետևից նրան հարցնում էի Աննայի մասին, լսեցի որ Աննան անկողնի միջից ասում էր զրեթէ զառանցելով.

— Անպիտանութիւն է այս... ուզում է Կոլեային սպանել, չի հաւատում ինձ... Աստուած իմ...

Բարեբաղդաբար տանտիկինը չէր հասկանում նրա խօսած լեզուն:

IV

Աննան հիւանդ մնաց մի ամբողջ շաբաթ: Ներս մտնել նրա մօտ— չէի կարող, անկողնի մէջ էր: Իմաց տւի իր ընկերուհուն և մի քանի ուրիշ ուսանողուհիներին, որոնք գալիս և խնամում էին նրան: Զղային ցնցող տենդ ունէր:

Երբ առողջացաւ, մի առաւօտ, իր սովորութեան համեմատ, առանց բաղխելու, դուռս բաց արաւ և մեղմութեամբ ժպիտը դէմքի վրայ,

— Բարեւ, ասաց նա— որքան ժամանակ է չեմ տեսել քեզ, ինչպէս ես:

Եւ ակնոյն առնելով նստաւ գիմացս:

— Լաւ եմ, պատասխանեցի— իսկ դուք. յոյս ունիմ որ այժմ լաւ էք:

— Յոգնակի խօսելը թո՛ղ, ասաց նա ձեռքս բռնելով— տո՛ւր ինձ ձեռքդ. միթէ, ասա ինձ, մենք չե՞նք կարող բարեկամ իսկ մնալ:

Զպատասխանեցի և ակնարկս մի ուրիշ կողմ դարձրի:

— Խօսիր, պնդեց նա, մեզ հնարաւոր չէ բարեկամ լինել միթէ:

— Ո՛չ, Աննա, պատասխանեցի ես վերջապէս— ես մի տարօրինակ մարդ եմ. երբ սիրում եմ մէկին, այդ սէրը յետոյ բարեկամութեան իջեցնել անհնար է լինում ինձ... կամ ամեն ինչ, կամ ոչինչ:

Վերկացաւ և քիչ հեռու գնաց:

—Այդ լաւ չէ, դիտեց նա—ես կուզէի քեզ հետ
բարեկամ մնալ... հնա, գիտես, ես մի բան պիտի
յայտնէի քեզ, մի նորութիւն:

Կանգ առաւ, վարանում էր:

—Օլգան, շարունակեց նա դժարութեամբ—
ընկերունհիս, գիտես... մի ուրիշ սենեակ էր վարձել
իր կողքին ինձ համար, այնտեղ լաւ կը լինի ինձ
համար, միշտ մի ընկերունհի կ'ունենամ կողքիս, որ
կը խնամէ ինձ, եթէ նորից հիւանդանամ:

—Ի՛նչ, ասացի ես գունաթափ—ուրեմն ուզում
ես հեռանալ արդէն:

—Հեռանալ, ժպտեց նա—ինչո՞ւ, բարեկամս,
սենեակս հեռու չէ, կարող ես յաճախ գալ ինձ մօտ:

—Ո՛ւ, ասացի ես—այնտեղ շատ հեռու է և
այստեղի պէս չի լինիլ. հեռանալով այստեղից,
զգում եմ, որ ուզում ես ընդ միշտ թողնել ինձ:

Յուզւեց, մօտեցաւ ու մեղմութեամբ գրկեց
վիզս:

—Լսիր, բարեկամ, իմ շատ սիրելի բարեկամ,
ասաց սիրալիր—ես քեզնից հեռանալ չէի ուզիլ,
բայց չեմ կարող քեզ սիրել և խնդրում եմ, աղա-
չում եմ, մեռցուր դէպի ինձ ունեցած այդ զգաց-
մունքդ, այդպէս պէտք է:

Պահեց մի րոպէ ձեռքս իրենի մէջ, յետոյ յան-
կարժ թողեց նրան և մի քանի քայլ արաւ դէպի
դուռ. այնտեղ նա կանգ առաւ մի քիչ:

—Ա՛խ, մոռացայ, ասաց նա շփոթւած և ա-

ռանց երեսիս նայելու. մոռացայ որ դասախօսու-
թեան պիտի գնամ... ցտեսութիւն, վաղը կարող ես
գալ ինձ մօտ:

Շտապով դուրս գնաց, դուռը ուժգնութեամբ
փակեց, յետոյ գահավիժմամբ մտաւ իր սենեակը և
մի րոպէից յետոյ արդէն փողոցումն էր:

Աշխատել էր այնպէս արագ հեռանալ, որ գա-
լոյնները չէր հագել և երբ մի քանի ժամից յետոյ
հեռւից տեսայ նրան փողոցում, ցեխոտել էր, բայց
դնում էր առանց ուշադրութիւն դարձնելու դրան,
ցուրոր կապտեցրել էր նրա ձեռքերը և նա մոռա-
նում էր ձեռնոցն անգամ հագնել:

Եւ այսպէս Աննան հեռացաւ ինձանից: Բնա-
կան է որ նախ սակաւ, և յետոյ մանաւանդ աւելի
սակաւ սկսեցի գնալ նրա մօտ, որովհետեւ երբէք
մենակ չէի գտնում նրան: Գիտէր գնալու ժամերս
ու աշխատում էր մենակ չլինել: Դուրս էլ չէր
գնում, որովհետեւ ուզում էր, զգալի կերպով ցան-
կանում էր տեսնել ինձ, խօսել ինձ հետ:

Եւ դեռ տանջւում էր ամեն անգամ, երբ տես-
նում էր ինձ, երբ ես սիրոյ վրայ խօսք էի բացանում:

Այդ միջոցին էր, որ, չնայելով ձմրան մօտե-
նալուն, խոլերան կոտորածներ էր անում Ռուսաս-
տանի ներքին գաւառներում: Ռուսաց կառավարու-
թիւնը հրաւէրներ էր կարդում բոլոր ռուսահապա-
տակ բժիշկ ուսանողներին, գնալ օգնելու առողջա-
պահական կամ օգնող խմբերին: Ամեն կողմից գնում

էին: Պարիզից էլ գնացին ուսանողներ և ուսանողուհիներ:

Աննայի ընկերուհին էլ չէր դիմանում կլիմային և բժշկի խորհրդով պատրաստուում էր վերադառնալ հայրենիք:

Եւ ահա մի օր, երբ ես Աննայի մօտ մտայ, գտայ այնտեղ մի տակնուվրայութիւն: Աննան կապկալում էր իր գրքերն և շորերը մի քանի ուսանողուհիներ օգնում էին նրան:

Ձարմացած կանգ առի շէմքի վրայ:

— Ի՞նչ է եղել, հարցրի, էլի՞ սենեակ էք փոխում:

Աննան գլուխը բարձրացրեց, թողեց գրքերն ու մօտեցաւ ձեռքը պարզեց ինձ:

— Ո՛չ ասաց յուզմամբ— Ռուսաստան եմ գնում:

Արիւնս մի բուռն հոսանքով վազեց դէպի սիրտս. գունաթափուելս զգացի:

— Գնում էք, ասացի— և ինչո՞ւ համար:

— Խոլերայի, ասաց նա— ուզում եմ մօտեւ նրա դէմը կուռղ բանակի մէջ:

— Բայց, զոչեցի ես անձկանօք— կուեւրու համար պատրաստ չէք դուք, դուք ոչինչ չգիտէք գեռ:

— Սխալուում էք, միջահատեց նա— ես այստեղ գալուցս առաջ բաւական բան գիտէի:

Յետոյ լռեց և նստեց. ինքն էլ գունաթափ էր:

— Ե՞րբ էք գնում, հարցրի յողորջուն ձայնով:

— Կէս գիշերին, այսօր... երեկոյեան ուզում եմ գալ ձեզ մօտ. տանը կը լինէք:

— Վեցից սկսած:

— Ժամը տասին կը գամ, ո՛չ աւելի շուտ:

Թղթափեց իրեն, բարձրացաւ, սիրալիր ժպիտով ձեռքը ինձ պարզեց և աւելացրեց՝

— Նո՛ւ, ցտեսութիւն, երեկոյեան, իսկ այժմ թողէք մեզ կապկալել:

Դուրս գնացի. ամբողջ օրը գժի պէս էի, գլուխս տեղը չէր. փողոցներում ման էի գալիս առանց նպատակի, դասախօսութիւններ լսեցի առանց մի բառ հասկանալու. շատերը ինձ հիւանդ կարծելով առողջութիւնս էին հարցնում:

Ժամը տասին եկաւ Աննան:

Ներիր, բարեկամ, որ չեմ կարող երկար կանգ առնել այդ յետին ժամերի վրայ, ոյժ չկայ:

Խօսեց Աննան, թէ՛ խմեց. շատ սիրալիր էր, գորովանօք էր դիտում ինձ. զգալի կերպով ձիգ էր գործում անվրդով մնալու, թոյլ չտուեց անգամ համբուրելու իրեն և եթէ ես մօտենում էի, նա մեղմութեամբ ետ էր հրում ինձ և քիչ նեղացած, բայց մեղմութեամբ ասում.

— Նո՛ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ, բարեկամս, երբ ասացի որ չեմ ուզում որ ինձ սիրես... ո՛չ, մոռացիր ինձ, մոռացիր...

Ժամը 11-ին գնաց: Հեռանալուց առաջ բռնեց ձեռքս, սեղմեց ջղաձգութեամբ, երկար նայեց աչքերիս, յետոյ արտասուալից աչքերով կոպւ կրծքիս, թոյլ տուեց որ համբուրեմ իրեն, ինքն էլ ինձ համբուրեց և ասաց մրմնջալով:

— Եթէ ապրեմ, բարեկամս, գիտցիր որ միշտ մի անկիւն կ'ունենաս այստեղ:

Յոյց տւեց սիրտը, խլեց գրկիցս և արագութեամբ դուրս փախաւ:

Խնդրել էր որ կայարան չդնամ, բայց գնացել էի:

Աչքին չերևացի, հեռւից տեսայ թէ ինչպէս բազմաթիւ ուսանողներ և ուսանողուհիներ սեղմեցին նրա ձեռքն ու բարի ձանապարհ մաղթեցին:

Նա ժպտում էր տխուր, գունաթափ ժպտով. նայեց բոլորին, աչքերով փնտռեց մէկին—ինձ էր փնտռում, չեաոյ ախ քաշեց և մտաւ վազոն:

Երրորդ զանգն էր հնչում:

Լուսամուտից էլի նայեց. փնտռում էր. քիչ մնաց երևան գայի, վազէի դէպի նա, բայց գնացքը շարժեց և տարաւ իր հետ իմ Աննային, իմ պաշտելի Աննային...

Ամիսներ անցան. ոչ մեռած էի, ոչ կենդանի. ստերի պէս պտտում էի. ամեն մի կին տեսնելուն պէս հեռւից, կարծում էի թէ Աննան էր:

Ո՛չ մի լուր չկար նրանից: Խնդրել էի որ մի նամակ գրէր, բայց ասել էր որ չի գրի, և չգրեց:

Եւ ահա մի օր եկաւ մի լրագիր, որի մէջ տպւած էին խոյերայի դէմ կռուող նահատակւած զինուորների—ուսանողուհիների և ուսանողների—անուաները:

Սրտատրոփ կարգացի. ախ, շատերն էին մեռել. բաւական շատերը զոհ գնացել:

Եւ իմ Աննան, իմ Աննան էլ դրանց թւումը:

Հեռու, մի գաւառի հեռու անկիւնում մեռել էր նա իր գործի մէջ, նահատակւելով իւրացիների համար:

Եւ այն օրից, բարեկամ, յաճախ տեսնում եմ ես այդ նահատակին, որ սիրում էր ինձ. այդ չքնան ոգուն, որին պաշտում էի ես. տեսնում եմ յաճախ, հեռու... ամպերի վրայ թառած, Ռաֆայէլի նկարած հրեշտակներից մէկի պէս գլուխը թւերի վրայ, ոսկեգօծ լուսով թաղթաղուն. և իր երկնային դի-
թի ժպտը՝ գողտրիկ, սիրուն դէմքի վրայ:

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

Դիրիջանից մինչև Ալեքսանդրապոլ տրոյկայով դնացի. ընկեր վերցրի Պարսկաստանից եկող մի պարսիկ. և որովհետև լաւ էի վարւում հետը և քաղաքավարութեամբ, նա իրան երախտապարտ էր զգում, իր հովանոցով ինձ արւիցը պաշտպանում կամ իր խօսակցութիւններով ինձ զբաղեցնում: Ինչպէս երևում է, պատմիչ էր. լիքը բերնով էր արտասանում նախադասութիւններ կամ բառեր և պատմածի մտքի համեմատ էլ շեշտւած միմիկաներ ունէր:

Զգիտեմ ինչպէս եղաւ որ նա ինձ պատմեց այդ զրոյցը. կարծեմ այդ այն ժամանակն էր, երբ ես ցանկութիւն յայտնեցի իջնել, ճանապարհից դուրս գտնուող մի հանքային ջրի մօտ գնալ. և երբ գնացինք, գտայ որ իզուր ժամանակ էինք կորցրել, որովհետև ջուրը ոչինչ բան էր:

Այդ բանից յետոյ մենք կառք նստեցինք և պարսիկը մօրուքը շփելուց յետոյ, վարդապետական ձայնով ու շեշտելով արտասանեց.

«Յանկալի առարկան նմանում է շիրմի,—բաց՝ բաց դռան վրայ մեծ փականք...»:

Յետոյ քիչ լռեց և աւելացրեց երազողի պէս.

—Ով Մանի, քո մտքերդ էլ քո քսան կանգունաչափ ձեռքովդ դժած. գծերի պէս ուղիղ են...

Ու լռեց: Ես ի հարկէ ոչինչ չհասկացայ: Մանի առասպելական նկարչի մասին գիտէի. գիտէի նաև որ նա կարողանում էր ձեռքով քսան կանգուն երկարութիւն և մի թափով գիծ քաշել այնքան ուղիղ, որքան կը լինի քանոնով գծւածը:

Բայց աֆորիզմը:

Խնդրեցի բացատրել: Ամենայն սիրով ընդունեց խնդիրս պարսիկը և պատմեց ինձ սոյն զրոյցը:

«Նկարիչ Մանին—պատմեց նա—մեռնելուց առաջ մտքումը դրեց մի լաւ բան նկարել ու յետոյ մեռնել:

«Այդ մտքով էլ նա սկսեց ման գալ և նկարի նիւթ որոնել: Ուզածն էր մի նոր, ցանկալի, տարօրինակ նիւթ:

«Մտաւ խոր ձորեր, պրպտեց իւրաքանչիւր խուլ անկիւն, մագլցեց լեռներն ի վեր, աչքի տակ տւաւ շատ տեսարաններ: Բայց որովհետև շատ տեսել էր, շատ էլ գննել և ոչինչ չէր խուսափել նրա աչքերից, ուստի և չէր կարողանում գտնել մի առարկայ որ լինէր տարօրինակ և որ զրգուէր նրա ցանկութիւնը:

«Եւ նա տխրում էր: Անտառի ոգին, լեռների

հիւրիններն ու ծովի ձուկ-կանաչք նոյն իսկ անկարող եղան նկարչին մի նիւթ տալ, մի նիւթ թելադրել: Իզուր նա ոտքի տակ էր տալիս ամբողջ բնութիւնը. ոչինչ նոր բան, ոչինչ ցանկալի, ոչինչ յարատեւ, տափալի:

«Եւ նա տխրում էր ու յուսահատւում:

Այսպէս տխրութեամբ նա թափառում էր ամեն կողմ, Շիրազի զաշտերի ու լեռների մէջ, երբ մի օր էլ զերեզմանատուն մտաւ և այնտեղ մի շիրիմ տեսաւ: Կանգ առաւ:

Մի մեծ շէնք էր, բարձր պատերով: Բայց ինչ որ զարմացրեց նկարչին, դա այն ահագին խոշորութեամբ կողպէքն էր, որ դրած կար շիրմի փակւած դռան վրայ:

Իսկ դռան ձախտին էլ արաբական տառերով գրւած էր—«Մտիր այստեղ եթէ կարող ես և կը գտնես ինչ որ փնտռում ես»:

Մեծ նկարիչը զայրացած գոչեց.

—Ո՞ր տխմարն է արդեօք գրել այս տողերը. մի՞թէ գերեզմանի մէջն է որ մօրդ կարող է միայն գտնել իր փնտռածը:

Յետոյ ծիծաղեց և աւելացրեց.

—Դա անշուշտ մի մեռնողի խօսք է. չկարողանալով ապրել, կտմեցել է մահը ցանկալի դարձնել, իրան մխիթարել. անճար է եղել ու բանջար կերել:

Ասաց ու մէջքը դարձրեց հեռանալու: Բայց չակամայից միտքը միշտ այդ տողերին էր, այդ վերտառութեան:

Մի քանի րոպէ մտածեց, յետոյ մի քանի քայլ մօտեցաւ դէպի մեծ կողպէքը, նայեց նրան ու ասաց.

—Ձարմանալի է. նախ՝ ինչո՞ւ փակել մի շիրմի դուռ և յետոյ ի՞նչ մտքով դնել այդ դռան վրայ մի այնպիսի մեծութեամբ կողպէք, որ միայն դնում են բանտերի կամ գանձարանների վրայ:

Եւ նա նորից վեր նայեց ու կարդաց.

—«Մտիր եթէ կարող ես և կը գտնես ինչ որ ուզում ես»:

—Մտնենք—մտածեց նա—գուցէ մի նոր բան կայ իսկապէս թաղնւած այդ մեծ կողպէքի ետեւում. թշուառութիւն կամ գերութիւն արդեօք թէ գանձ կամ իշխանութիւն...

Շարժեց կողպէքը. շատ ծանր էր. վերցրեց մի մեծ քար և նշանով սկսեց ծեծել փականքը:

Հետաքրքրութիւնը այնքան սկսեց գրաւել արտիստին, որ նա ցանկութիւնից դողում էր:

Երկար շարշարեց և երեկոյեան դէմ վերջապէս շարժեց փականքը, յանկարծ փշրեց մեծ կողպէքն ու շիրմի դուռը կրնգան վրայ դառնալով լայնութեամբ բացւեց:

Յաճ ձգեց քարը, մի քայլ արաւ. ներս մտաւ
և զարմանքի մի մեծ աղաղակ արձակեց:

Դէմ ու դէմի պատը բաց էր լիովին, և այդ
բացւած քից երևում էին Շիրազի տներն ու այգիները:

Շիրիմը միայն երեք պատ ունէր. ետեւի պատը
լիովին չէր էլ շինւած: Իսկ շիրմի ներքին տեսքը
ապացուցանում էր, որ այդտեղ ոտ կոխողը առա-
ջինը՝ նկարիչ չէր:

— Ինչպէս... ինչո՞ւ ուրեմն այդ այլանդակ գոր-
ծողութիւնը:

Շինել մի շէնք միայն երեք պատով, ետեւի
պատի տեղը բաց թողնել և ապա դռան վրայ էլ
մի մեծ փականք կանգնեցել. ինչո՞ւ:

— Լաւ ծաղրեցի, ճակատը կնճռեց արտիստը—
և սակայն դռան ճակատի գրւածքը չկատարեց իսկ,
որովհետեւ փնտռածս էլ չեմ գտնում գոնէ:

Բայց հազիւ թէ դարձել էր, որ աչքը ընկաւ
պատի վրայ քանդակւած սոյն երեք տողերին և նա
կարդաց.

«Ամեն ինչ նոր է աշխարհիս վրայ, սակայն ո-
չինչ նոր չէ:

«Ձեռք բերելու դժւարութիւնը՝ առարկան ցան-
կալի է դարձնում:

«Մի անգամ ձեռք բերած՝ նա դառնում է
սովորական...

Մանին ընկղմեց մտածութեան մէջ. այդ տո-
ղերը խիստ ազդեցին նրա վրայ:

Գտել էր փնտռածը, բայց և չէր գտել. որով-
հետեւ եթէ գտնէր՝ փնտռածը այդ չէր լինիլ: Ու-
րեմն փնտռում էր մի այնպիսի բան, որ չպիտի
գտնւէր:

Հասկանում էր այժմ:

Դուրս եկաւ շիրմից, գնաց տուն, ձեռքն առաւ
վրձինը և նստաւ կտաւի առաջ:

Նկարեց շիրիմը երեք պատով, ետեւի բացւած-
քով, նկարեց դռուը և դրեց նրա վրայ խոշոր եր-
կաթեայ փականքը:

Յետոյ փոխանակ գրելու շիրմի վրայի խօսքե-
րը, դրեց սոյն տողերը.

«Յանկալի առարկան նմանում է այս շիրմին—
բաց՝ բայց դռան վրայ մեծ փականք...»



ԶԳԱՅՆԱԶԱՓ

Պատահել է ձեզ նկատել որ մրգավաճառների թղթէ տոպրակները զանազան գրքի կտորներից են շինած լինում և երբ մի քիչ աւելի ենք զննում, դուրս է գալիս որ այդ թուղթն էլ հանւած է կամ մի ամսագրից և կամ ձեզ ծանօթ մի գրքից:

Այնպէս լաւ տանձեր ունէր մրգավաճառ Սարգիսը, որ անցնելիս կանգ առայ և երկու Փունտ գնեցի: Կռեց, լցրեց արդէն պատրաստ մի թղթէ տոպրակի մէջ և տաւ ինձ: Դրսում դեռ երեք հատ տանձ չէի կերել, նկատեցի որ տոպրակի թուղթը ամսագրից է հանւած ու այն էլ Ֆրանսերէն ամսագրից. թէև երեսի ճակատի վրայ ամսագրի անունը չկար, բայց մի յօդւածի կիսաորը à suivre (շարունակելի) բառից և մի ուրիշ յօդւածի սկսիլը՝ ինձ այդ եզրակացութեան բերաւ: Երբ տուն մտայ, խնամքով երկու կէս արի տոպրակը և սկսեցի կարդալ: Կարդացածս մի «հնդկական» կոչւած գրոյց էր. ոչ մի ստորագրութիւն չունէր տակը: Ես թարգմանում եմ, բայց չաչտարարում եմ եթէ մէկը կարողանայ ինձ ասել թէ որ ամսագրից է կամ ո՞վ է հեղինակը, շնորհակալ կը լինեմ:

Ահա այդ գրոյցը:

Մի ծեր բրահմին մի երեկոյ տուն էր վերադառնում: Վերջալոյսի ժամանակ էր, երբ նա մօտեցաւ քաղաքին:

Յանկարծ նկատեց երկու մանուկների, որոնք կուչ էին եկել մի վրանաձև շորի տակ: Մօտ գնաց ու առանց տեսնելու, աշխատեց լսել նրանց խօսակցութիւնը:

Մանուկներից մէկը—մի փոքրիկ աղջիկ, լաց էր լինում ու հաց ուզում. քաղցած էր: Միւսը—մի տղայ, որ քիչ աւելի հասակաւոր էր քրոջից, մտիթարում էր աղջկան, առարկելով որ մայրիկը շուտով կը դար ու հաց կը բերէր:

Եւ իսկապէս, քիչ յետոյ մայրիկը եկաւ յօդնած ու դժգոյն: Գալուն պէս հանեց զամբիւղից մի հաց ու դրեց մանուկների առջև:

Աղջիկը իսկոյն հացի վրայ ընկաւ ագահութեամբ, իսկ տղան իր հացը երկու կտոր արեց. մի կտորը ծածկաբար թաքցրեց մի անկիւնում, իսկ միւս կտորը ուզում էր բաժանել իր մօր հետ և որովհետև մայրը մերժեց ուտել, այն ժամանակ ինքը կերաւ ամբողջը:

Տղայի այդ վարմունքը հետաքրքրեց բրահմինին և նա վճռեց միւս օրը գալ և տեսնել թէ տղան արդեօք պակաս քաղցած էր աղջկանից:

Միւս օր կէսօրից յետոյ նա քաղաքից դուրս եկաւ և զնաց դէպի վրանը: Առանց աղմուկ հանե-

լու մօտեցաւ: Միւնոյն բանը տեսաւ. փոքրիկ տղ-
ջիկը լաց էր լինում ու հաց ուզում, իսկ տղան
աշխատում էր նրան մխիթարել: Վերջապէս երբ
տղան տեսաւ որ աղջիկը ձայնը չի կորուսւմ, հանեց
երեկւայ սահաճ հացն ու տւաւ քրոջ: Քոյրը
առաւ, ուզեց բերանը տանել, բայց իսկոյն էլի գե-
տին ձգեց ու ասաց.

— Բայց չէ որ քո հացն է:

— Ես քաղցած չեմ, ինչ եմ անելու:

— Ես էլ չեմ ուզում:

— Ինձ էլ պէտք չէ:

Եւ հացը մնաց գետնի վերայ: Մանուկներից
ոչ մէկը չէր ուզում դիպչել հացին:

— Այդ լաւ է, մտածեց Բրահմինը հացի այդ
կտորի շնորհիւ աղջիկը այլեւ մինչև երեկոյ հանդարտ
կը մնայ և չի լալ:

Ու երբ բրահմինը տուն էր վերադառնում,
մտածեց առաքինութեան մասին: Մտածեց ու գտաւ,
որ առաքինութիւնը ծնում է զգացմունքներից:

Յետոյ էլ մտածեց թէ արդեօք չէր կարելի կշռել
մարդկային զգացմունքների աստիճանը մի գործիքով,
ինչպէս որ չափում է տաքութեան աստիճանը:

Եւ որոշեց շինել մի զգայնաչափ:

Վերցրեց որբի արտասուքից մի քանի կաթիլ,
լցրեց մի ապակեայ բարակ խողովակի մէջ ու գնաց
դէպի վրանը: Այնտեղ նա խողովակը զրեց տղայի
սրտի վերա և երբ արտասուքը սլսեց եռ գալ, նա

նշանակեց խողովակի վերայ եռացման կէտը 100
թւով: Յետոյ նա գտաւ մի խորթ մայր և նրա—
դէպի իր խորթ որդին ունեցած—զգացմունքը չա-
փելուն նշանակեց 0-ով:

Եւ այդպէս դէպի վեր ու դէպի վար բաժա-
նումներ անելով՝ զգայնաչափը սլատրաստ էր:

Բայց պէտք էր գտնել արտասուքի սառելու
կէտը, որպէս ջերմաչափի մէջ սնդիկի— իրեն սա-
ռուցման կէտը կայ:

Դրա համար էլ բրահմինը ամբողջ քաղաքում,
յետոյ էլ ամբողջ աշխարհում սլսեց ման գալ իր
գործիքով և փնտրեց ամենախիստ չարագործներ:
Ո՛չ մի դէպքում արտասուքը չէր սառում:

Բրահմինը դրանից յետոյ եղբակացրեց որ երեւի
բնութեան մէջ՝ արտասուքի սառուցման աստիճանը
չէր գտնւում:

Ու դադարեցրեց իր հետախուզութիւնը:

Հանձարեղ գիւտի հուշակը տարածւում էր
աւլեն կողմ: Հարուստ և աղքատ, խելօք կամ յի-
մար գալիս էին բրահմինի մօտ: Ամէն ոք կամենում
էր իմանալ իր զգացմունքների աստիճանը: Մի հարց,
որ առանց գործիքի դժւար է լուծւում:

Վերջապէս եկաւ և մի կին:

Այդ կինը իր ամբողջ կեանքը անց էր կացրել
եկեղեցուն ծառայելով: Յայտնի էր որպէս մի խիստ
ջերմեռանդ տնային և ոչ ոք չէր կասկածում նրա առա-
քինութեան վերայ:

Եկաւ նա, թէև գիտէր որ իր կեանքովը—որը նա Աստծուն էր նւիրել—իր զգացմունքները այնքան վսեմացրել էր որ, բոլորի սխալներն արհամարհելով, ինքը միայն արժանի էր մեն-մենակ՝ տիրապետել երկնային բոլոր վարձատրութիւնները:

Այդպիսի բացարձակ բարոյականի տէր անձը ուրեմն և պէտք չէր ունենայ իր զգացմունքների քանակութիւնը գիտենալու:

Բայց նրա ուզածը այն էր, որ մի անգամ ևս կարողանար ակներև կերպով փայլեցնել իր բարձր առաքինութիւնը ամբոխի առջև:

Եւ նա հպարտութեամբ մօտեցաւ գործիքին... Արտասուքը վայրկենապէս դաժ իջաւ, և... սառեց:

Բրահմինը հիացած, ուրախ, վեր թռաւ ու օրհնում էր կնոջը: Նա իսկոյն նշանակեց սառուցման կէտը և նրա կողքին էլ արձանագրեց սոցն խօսքերը՝

«Առաքինութիւնը՝ վատթարութեան աստիճանի»:

Կինը կատաղեց: Տաճարի շէմքի վերայ բարձրացաւ ու այնտեղից մեծ ձայնով գրգռեց ամբոխին՝ սատանայական գիւտերի դէմ և խորհուրդ տւեց, յանուն ամենամեծ փառացն Աստուծոյ, ոչընչացնել զգայնաւորը:

Բարեպաշտները գրգռւեցին, «սուրբ» կրակով վառւած յարձակում գործեցին Բրահմինի տան վերայ և փշրեցին գործիքը:

Զգայնաւորը այլ ևս չկար:

Եւ հէնց այդ օրւանից է, որ այլ ևս չկայ մի կշիռ մարդկային առաքինութիւնների և զգացմունքների համար...

Չ Ի Ս Տ Ի

Կայարանի մայթի վրայ էլ են շարւում ամեն առաւօտ, այդ աղտոտ հաղուստով թշւառ կոշկաջինջները: Սանդուխտների գլխից սկսած, նրանք բռնում են մայթի մի մասը: Առաջին տեղը բռնում է լաջն դէմքով մի հայ. նրանից քիչ հեռու 5—6 յոյն պատանիներ, որոնցից երկուսը անդադար կռւում կամ վիճում են. մէկը համր է և «չիստի» բառը կանչելու փոխարէն՝ «ւ», «ւ», «ւ» է անում, իսկ չորրորդը, որի գծագրութիւնները ժամանակից առաջ չափահաս եղած մանուկի գծեր են—անցորդներին է զննում ու շաղրութեամբ, մանաւանդ կանանց:

Մենակ այնտեղ չէ կոշկաջինջների տեղը: Նրանք Բաթումի անց ու դարձ ունեցող բոլոր փողոցների անկիւններում կան. անցնելիս նայում են կոշիկիդ և, եթէ նրան մաքուր չտեսնեն, խլացնում են ականջդ իրենց կանչերով. յաճախ իսկ, իրենց արկղիկը ուսի վերայ, խողանակով ծեծում են նրան և ետեւիցդ են գալիս անդադար «չիստի» կանչելով:

—Զիստի... լսեց կողքիցս, երբ բարեկամիս հետ կայարանի մայթի վերայ էինք:

—Կողքիդ նայիր, ասաց բարեկամս—կոշկաջինջը հայրենակիցդ է:

Նայում եմ և այդ գէր դէմքով հայի մէջ տեսնում եմ վաղուցւայ ծանօթ փիլիսոփայ Մանուկին: Տասը տարի առաջ, ուսին մի մեծ սակառ, քարշ էր գալիս նա Թիֆլիսի փողոցներում և «դարեայի բռնկի» էր աղաղակում. իսկ այժմ կայարանի մայթի վերայ և Բաթումի փողոցներում մանգալով, խողանակով արկղիկն է ծեծում ու «չիստի» ձայնում:

Երևի փիլիսոփայ Մանուկին վիճակած էր միշտ քարշ գալ և միշտ աղաղակել. ապրել էր պէտք: Անցեալ օր էլ մի Մարտիրոսի ցոյց տւին ինձ, որ նաւամատոյցի վերայ նստած, չձանաչելու համար գլխարկը մինչև աչքերը իջեցրել, ակնարկը միշտ դէպի ցած՝ կոշիկներ էր սրբում, «չիստի» գոչում: Վենետիկի դպրոցից էր այդ Մարտիրոսը և ով ինձ նրան ցոյց տուաւ, պատկառանքով էր խօսում նրա մասին:

Ապրել է պէտք. ստամոքսը ոչ փիլիսոփայ է ձանաչում և ոչ էլ Վենետիկի դպրոց. նա միայն ուտել է ուղղում:

Նայեցի Մանուկին: Նա էլ ինձ տեսաւ, ճանաչեց. հայեացքը ուրիշ կողմ դարձրեց և դադարեց «չիստի» կանչելուց:

Մօտեցայ ու ոտքս դրի նրա արկղիկի վերայ: Հանեց լռութեամբ խողանակները—երեսիս չէր նս-

յում—վարդիկիս ծայրերը դարձրեց ու սկսեց սրբել:

—Ո՞րտեղ էիր այսքան ժամանակ, հարցրի մեղմութեամբ:

—Յնցւեց, բայց առանց վեր նայելու՝ կմկմաց:

—Կօշիկ եմ սրբում:

Երկուսս էլ լռեցինք: Յոյն պատանին, որ մի լաւ զննել էր ինձ, այժմ վիզը երկարացրել, աշխատում էր գրպանիս եղած գիրքը զննել:

—Գիտես, խօսեցի քիչ յետոյ—Թիֆլիզից եմ գալիս. այնտեղ էջնաթենց Տիգրանին տեսայ...

—Է, արեց նա:

—Բուլլի էր ծախում... Ինչ է եղել նրանց սնանկացել են:

—Եղբօր փողերը հատաւ արդեօք, աւելացրեց նա—ոտքդ քիչ պինդ կոխիր... Աստուած արդեօք իր դատաստանը կատարեց վերջապէս... խօ գիտես նրա եղբօր արածները:

—Լսել եմ:

—Լսածդ ինչ կը լինի որ... պիտի տեսնել, իր վրայ փորձել: Նրա արածները երկնքին սիւն եղան, սիւն...

—Քո փողերն էլ է կերել:

—Ի հարկէ... բայց քիչ. ինձ շատ խաբել էր. կարողացաւ. դրա համար էլ ինձ մատնեց, քիչ մնաց բռնել տար երկրում:

—Ես շատ եմ լսել նրա մասին, ասացի ես—

բայց զարմանում եմ թէ ինչպէս կարող է մարդ այսպէս ժամանակ և իր դառն քրտինքը աչքերը բաց ուրիշի ձեռքը տալ:

—Ձը տւի՞ր՝ ինչ կանես. մօտն ես գործում, փողը իրեն չես տայ, կասի—«ինձ չես հաւատում. դէհ, որ չես հաւատում»՝ գնա, ինձ մօտ էլ մի ծառայիր: Ի՞նչ կարող ես անել: Չափում ես, կշռում և մտածում ես:—«Չտամ, ինձ դուրս կ'անի. թէ որ տամ, գուցէ խղճայ ու չուտի... ուրեմն տամ, գուցէ չուտի... և տալիս ես:

—Առանց ստորագրութեան:

—Ստորագրութիւնը որն է. ճերան չես հաւատում. գո՞ղ ես համարում, որ ստորագրութիւն էլ ես ուզում. քանի քեզպէսնէրի փող կայ նրա մօտ. 10—15 տարի է սաղ վանեցւոց ու աշխարհին էլ յայտնի է, որ էջնաթենց Կարապետը փող ուտող մարդ չէ, որ...»:—Ահա թէ ինչ կ'ասի քեզ: Բացի դրանից, շատ էլ ստորագրութիւն եղաւ, ինչ կարող ես անել: Դատ բանալը հեշտ բան է. չէ որ եթէ 100 մանէթ առնելիք ունենաս, 200 էլ դատի ծախս պէտք է քեզ... Երկիր փող ուղարկելու համար ստորագրութիւնը որն է...

—Քեզ ինչ է արել նա:

—Ինձ շատ բան չէ արել... Կօշիկներդ—գիտես—հալից ընկել են, կրունկները փոխել տուր...: Ուզեց շան պէս դատածս, մի քիչ ունեցածս ձեռքիցս խլել—չկարողացաւ, չուի, վարպետ եղայ:

մօտիցն էլ շուտ դուրս եկաց: Ինձ և միւսներին, օրինակ, ասել էր, որ իր տւած բուլիներին քանի հատ որ մնաց ամեն երեկոյ, պիտի ետ առնէր: Երեք-չորս օր լաւ էր... մէկ օր էլ բարկացաւ. «շան որդիներ, ասաց, ձեր քեառթու հացերը քս պիտի սաղացնեմ. հոգիներդ դուրս գա՛յ՝ ման եկէք ու ծախէք: Ասում էր «ման եկէք»... Առաւօտեան ժամը 6-ից, երբեմն 5-ից մինչև 11. կէսօրից յետոյ 4-ից մինչև 9-ը էլ տեղ չէր մնում. առանց կանգնելու՝ ման էինք գալիս. ձայներս կտրւում էր գողալուց. թափառական հրէայի պէս և մի րոպէ մի դռան շէմքի վրայ նստել չէինք կարող... «Քալէ, քալէ», կոչում էր մեզ մեր ստամոքսը. «քալէ» ձայնում էր աղան... և մենք քալւում էինք, անդադար քայլւում... ըշտէ այսպէս ենք ապրում մենք... Միւս ոտքդ բեր, աս լմնցաւ:

Պահ մի մեղնից ոչ ոք չխօսեց. ես տւի միւս ոտքս, նա ներկը քսեց և երբ խողանակով սկսեց շփել, շարունակեց.

— Ըշտէ ասանկ, աղաս... օրը մինչև երեկոյ, վեց ամիս անդադար քալեցի ու քալեցի. գողացի ու կանչեցի, հաց-պանրից ու երբեմն էլ ասորի կամ պարսիկ խոհարարների աղտոտ կերակրներից զատ բան չկերայ... քիչ փող ետ ձգեցի:

— Որքան:

— Յիսուն մանէթ... լաւ փող էր, կարող էի երկիր վերադառնալ, մի թեթեւ գործ բռնել:

— Է՛, ինչու չվերադարձար:

— Հիւանդացայ, ունեցածս էլ կերայ ու մի քիչ էլ պարտք արի. շատ էի «քայլել»...

Ժպտեց դառնութեամբ ու լռեց: Պատկերացան մտքիս մէջ այդ իսկապէս թափառող թշուառ հայ-րենակիցներս, որոնցից յաճախ կարելի է տեսնել Թիֆլիսի փողոցներում քարշ գալիս: Փռշոտ, յոգնած խռպոտ ձայնով զոչում են նրանք «գարեաչի բուլկի»... և ոչ ոք չէ զթում նրանց, ո՛չ ոք...

— Կլոր-դաիի Խաչօին ճանաչում ես, հարցրեց յանկարծ Մանուկը առանց ինձ նայելու և շարունակելով սրբել:

Ձէ, այդ ի՞նչ Խաչօ է:

— Էն, որին ուռւս Խաչօ էլ էին ասում: Ռուսէթ շատ էր մնացել: Մի տղայ ունէր, միասին էին Թիֆլիզ: Որդին աշչի էր, հայրն էլ բուլոչնի՛լ՝ Էյնաթի Կարապետի մօտ:

— Լաւ, յետո՛յ:

— Կարապետը Խաչօին սկսեց համոզել, որ իր աշխատածից որդուն չտար և տուն էլ չուղարկէր: «Տեսաւ էր, ասում էր նրան—որդիդ էլ է աշխատում, թող նա տունը պահի, իսկ դու փող ետ ձգիր, որ էգուց-մէկէլօր թէ աղադ քեզ չուզի պահել, դու խեղճ չմնաս...» Խաչօն համոզեց, ամսական միջև 10—15 մանէթ ետ էր ձգում, շան պէս էլ կեանք վարում: Փողերը թողնում էր Կարապետի մօտ: Տարի մ'երկու, մօտ 300 մանէթ աշխատեց. էլ նրա քե-

Ֆին-քէֆ չէր հասնի. ուղեց փարէն առնել ու երկիր վերադառնալ: 30—35 ոսկի էր, բոլ փող էր, ուղեց Կարապետից:

— Ստացաւ:

— Համբերիր... Կարապետը, աղիս ասեմ, նրան համոզեց, որ փող հետը տանել վտանգաւոր է, քիւր-դերը կը խլէին և այլն, որ թող Խաչօն երկիր էր-թաց ու Կարապետը հեռագրով նրան փող կը հասցնի— «փողը տիրոջ առջև դուրս կը գայ»... հաւատաց Խաչօն ուրիշ ճար էլ չունէր թէ որ չհաւատար: Հասաւ երկիր— «փողը տիրոջ առջև» չելաւ: Նամակ գրեց, պատասխան չկայ: Ետ դարձաւ Թիֆլիզ եկաւ. Կարապետը վռնտեց իր խանութից. «Շան ես ձգում վրաս— ասաց ինչ փող, ինչ բան, թող թող ուր է...» Յուսահատ Խաչօն այս դուռն այն դուռ ընկաւ ու... այս մէկ կօշիկդ էլ հալից ընկել է, գիտե՞ս...

— Յետո՞յ, յետո՞յ գոչեցի ես նեղացած.— Խաչօն ինչ եղաւ:

— Ինչ պիտի լինէր. մահախից-ցաւից մեռաւ: Տարանք թաղեցինք Վերայի գերեզմանատուն: Որդին էլ երկիր երթալու ժամանակ սպանեց: Տասը—կին ու տղայ— հոգի ունեն. Ստուած նրանց ումուղին հասնի, ով գիտէ այժմ քանիսը քաղցածութիւնից մեռել են...

Վերջացաւ սրբելուց: Վճարեցի. ոչ ես խօսեցի և ոչ նա, այլ հեռացայ:

Երբ իջնում էի սանդուխտներից և հեռանում Կայարանից, զեռ բաւական հեռու լսում էի Մանուկի տխուր ձայնը, որ գոչում էր.

— Զիստի...

ՔԱՐ ԶԱՐԴՈՂՆԵՐ

Իմ բարեկամը սիրում է լաւ ապրել, երբ կարող է: Ամեն չարմարութիւններ ունի և ոչինչ չէ խնայում լաւ բնակարան ունենալու համար: Դրա համար էլ նա իր տունը վարձած ունէր քաղաքի ամենալաւ տեղում, խճուղու վրայ: Բնակարանի ամենալաւ մասը պատշգամբ էր, որ կիսովին դուրս էր պարզում դէպի խճուղին և ունէր իբր տեսարան՝ գետը, այգին, լեռներն ու բերդը մի կողմից, իսկ դէմուկէմից էլ մի քանի հարուստների պերճ տներ:

Պատշգամբը զարդարւած էր վարագոյրներով, որոնք ես իջեցրի մի օր ժամը 12-ին և, սպասելով ճաշի, առի մի գիրք, նստայ բազկաթոռի մէջ ու այդպէս հանգիստ և հովանու մէջ՝ սկսեցի կարդալ:

Կարդում էի, բայց գլուխս բան չէր մտնում. ուղեղս դեռ չէր տաքացել, ուշադրութիւնս չէր կենդրոնանում. մի նախադասութիւնից յետոյ աչքերս զրբից հեռացնում էի և ուրիշ բանի ուղղում: Օրինակ հէնց նայում էի դէպի ցած խճուղու վրայ քար փշրողներին ու նրանց գործողութիւնը դիտում: Սկզբում չէի էլ զգում, յետոյ էր միայն որ

տեսայ նրանց պարսիկ լինելը, իսկ աւելի յետոյ էլ կենդրոնացնել յաջողեց ուշադրութիւնս և սկսեցի հետազօտել այդ տեսարանն ու նրան բաղկացնող մասերը:

Երկու պարսիկներ էին Պարսկաստանից — երեի Թաւրիզից կամ Խոյից, Թաղեայ թասաձև գլխարկ էին կրում. կապոյտ կտաւի արխալուխ էին հագել և այն էլ այնպէս կտրտւած, խուռացած ու նոր կտորներով կարկտնած արխալուղ, որի պէս պարսիկները միայն կարող են հագնել: Կտրտւածներ ու ծակեր անպակաս էին թէ թւերի և թէ կրճքի վրայ: Սպիտակ շալւարը կեղտոտ ու կտրտւած՝ ձգելու աստիճանի, իսկ նրանք ձգելու անգամ չէին մտածիլ, որովհետև տնտեսագէտ էին երևում. չէ որ միշտ քարերի վրայ էին նստում:

Ոտքերի կօշիկները — տրեխներ, պատած էին հաստ կաշու կտորներով, որովհետև քարերին շատ էին շփում ոտքերը: Նստել էին ոտները պարզած դէպի առաջ. դնում էին քարի մեծ կտորը, ոտքերով բռնում, իսկ կոանով ջարդում. ջարդելուց յետոյ ոտներով հրում և ետ տալիս — ահա նրանց պարբերական ամբողջ գործողութիւնը:

Կիզիչ արևը այրում էր նրանց մէջքը ետեից. երևի միշտ էլ այդ դիրքով էին նստում նրանք, որովհետև նրանց լերկ վիզը ետեից՝ հասել էր նեղրային սևութան: Սև էր դեմքերն ու ձեռքե-

րը. դէմքը թշւառներին յատուկ խոր կնճիռներով լիքը, աչքերը արիւնով լցւած, քթերի կաշին՝ պողոճկւած, այտերը այրւած, ձեռները հողոտ ու կոշտ, ոտների ոլոկներն՝ աղտոտ ու թուխ:

Երբ ես գննում էի այդ բոլորը, իմ մէջ հարց ծագեց թէ արդեօք ճրքանով են վճարւում նրանք այն փոքրիկ ջարդւած քարից պիրամիդի համար, որոնցից ամեն ոք կարող է տեսնել խճուղիների կողքին: Յետոյ էլի մի հարց գոյացաւ այդ հարցից, այն է, թէ օրական արդեօք քանի պիրամիդ կարող էին ջարդել երկուսը միասին: Մտաբերեցի որ մի քանի տարի առաջ էլ այդ հարցը հետաքրքրել էր ինձ, հարցրել էի, գիտէի, աշխատեցի յիշել, բայց մոռացել էի:

Նայում էի անընդհատ: Նկատեցի իսկոյն որ կտրուող քարերը լաւ կարծր էին. պէտք է որ որձաքար լինէին, բայց կային և գրանիտի կտորներ, որովհետեւ դէս ու դէն էին ցայտում յաճախ կրիստալային կաղմւածքների, որոնց մուրճի 5—6 հարւածներ հազիւ էին կտոր-կտոր անում:

Ո՛ւշ, ի՞նչ դժւար գործ էր: Արեւի տակ, այդպէս անյարմար կերպով նստած և անդադար միևնոյն տաղտկացուցիչ գործը: Ինձ եթէ մի պիրամիդի համար 10 բուբլի իսկ տային՝ չէի անիլ:

Այստեղ յիշեցի որ բարեկամիս ծառան խմելու սառը ջուր մատակարարելու համար, պահ մ'առաջ

երկու վեդրոններ կախ էր արել մի կոր ճկուն փայտից, լցրել էր նրանց ջրով և վերադառնում էր մի վերստ հեռու աղբիւրից: Հեռւմ էր, քրտնաթոր, ծնկները կքոււմ էին և ես մտածում էի թէ որքան սոսկալի բան կը լինէր եթէ ինձ ստիպէին այդ գործը կատարել: Բարեկամս ասում էր որ 100 բուբլի էլ տային՝ ինքը չէր անիլ այդ: Կ'ուզէի այն որ նա դուրս գար և ես նրա ուշադրութիւնը հրաւիրէի քար փշրողների վրայ: Անշուշտ նա այդպիսիների հարիւր անգամ տեսած կը լինէր. տեսած կը լինեն շատերը, միշտ էլ տեսնում ենք. բայց ո՛չ մի ժամանակ առանձնապէս կանգնած, գոնէ ես, չէի դիտել այդ տեսարանը: Հետաքրքիր մի տեսարան էլ չէ, ոչ էլ գեղարեւոտական. սարսափելի է միայն. — Արեւը մի ճեղքից քիչ խփելու ժամանակ իսկոյն ամեն հնարք գործ դրի որ վարագոյրները գնդասեղով և այլն միացնեմ ու ձառագայթի մոտքն արգելեմ. իսկ ինձնից քիչ հեռու, առաւօտեանից ի վեր, 7 ժամ անընդհատ կատարեալ արեւի մէջ՝ քար են փշրում երկու խղձալի արարածներ:

Արդեօք ի՞նչ պիտի ստանային ամբողջ օրւայ այդ տանջանքի համար: Խօսում էին. սկսեցի լսել որ գուցէ հարցիս պատասխանը իմանալ յաջողէր ինձ:

Լսելու համար՝ քիչ ծռւեցի դէպի փողոցը:

Այդ միջոցին էր որ մի սուր ձայն լսեց:

—Բուլկի, աղաղակում էր մէկը, որ մի մեծ սակառ. աջ ուսին, կքւած նրա ծանրութեան տակ՝ ձեռքի փայտը իբր յենարան գործ ածելով, բարձրանում էր փողոցն ի վեր, անցնելով ճիշտ քար փշրողների կողքից։

—Բուլկի. կրկնեց նա ականարկը մեքենայօրէն՝ քար փշրողներին դարձրած։

—Ի՞նչ. հարցրեց պարսիկներից մէկը և մուրճը ցած դրեց— բուլկի... դա ի՞նչ բան է։

Հաց ծախողը կանգ առաւ նրանց կողքին։

—Հաց է, ասաց։

—Բաս հացը այդպէս կը ծախեն։

Միւս պարսիկն էլ դադարեց, մուրճը գետնէն դրեց ու դառնալով ընկերին՝ նկատեց անհամբերութեամբ՝

—Ձեռ հասկանում, Մահմէդ, դա չայի հաց է։

—Յոյց տուր նայենք, ասաց Մահմէդը հաց ծախողին։

Վերջինս երեւի հոգնել էր և մի փոքրիկ առիթի էր սպասում որ սակառը ցած դնի։ Յաճ էլ դրեց, բայց երեսի ծածկոցը չհանեց։

—Բաց, տեսնենք, հարցրեց Մահմէդը պարսկական յատուկ համարձակութեամբ—տեսնենք ինչ տեսակ հաց է։

—Խօ չէք առնելու, էլ ինչու բանաւ։

Միւս պարսիկը վիրաւորեց։

—Ինչից դիտես որ չենք առնելու, այ՛նչ հայ։
Հայ էր ծախողը. կռացաւ և սակառի ծածկոցը ցած քաշեց։

—Ահա տեսէք, ասաց—բուլկի է էլի։

Սակառը լիքն էր բուլկիներով, նոր էին եփւած ու մի շատ անուշ հոտ փչեցին պարսիկի թածակների մէջ. շատերի երեսի կարմրութեան վրայ մարգարիտների պէս փայլփլում էին շաքարաւազի հատիկներ։

—Էս ի՞նչ տեսակ հաց է, մատը դրեց մէկի վրայ Մահմէդը, և ի՞նչ փափուկն էլ է. սա ուտում են։

—Ի հարկէ, ծիծաղեց ընկերը։

—Ձայի հետ են ուտում, աւելացրեց ծախողը— շատ համովն է։

—Մէկ նայիր այստեղ է, Շիրին, դրդեց ընկերոջ Մահմէդը և ուզեց ձեռք առնել մի բուլկի։

—Ձեռք մի տալ, կը փշրես, արգելեց ծախողը։

Պարսիկը ձեռքը ետ քաշեց, յետոյ ուզեց մուրճը ձեռք առնել, բայց էլի թողեց և մի տենչալի հայեացք ձգելուց յետոյ սակառի վրայ՝ ասաց։

—Փահ, փահ, ի՞նչ լաւ հացեր են էք։

Ծախողը ծանրութեամբ սկսեց ծածկել բուլկիների երեսը։

Մահմէդը ցուցամատի վրայ բութով մի եղնկաչափ ցոյց տալով՝

—Մի այսքան կտրի տուր, ասաց—տեսնեմ ի՞նչ համ ունի։

Միւս ընկերը ժպիտը դէմքին՝ լսում էր. չէր էլ ջարդում. երբեմն միայն կռանը տափակեցրած՝ հեռից մօտ էր քաշում քարի թռչկոտած կտորները:

— Ի՞նչպէս կարելի է, պատասխանեց ծախողը և սակառն ուսի վրայ ձգեց— չէ որ կը փշանայ:

— Մի այսքան էլի, պնդեց Մահմէդը— խօսուելի չեմ ուզում. գուցէ, եթէ լաւն է, առնեմ:

— Շատ լաւն է, չեմ տեսնում որ շաքարով է շինւած:

— Շաքարը երեսն է, խօսէջն էլ չէ:

— Մէջն էլ է շաքարով:

— Բ՛նչ... զարմացաւ Մահմէդը— մէջն էլ:

— Ի հարկէ, ասաց ծախողը— իւզով էլ:

— Բ՛նչ... իսկ ի՞նչն է կարմրեցնողը:

— Իւղն է և ձուն:

— Ձիւն էլ կայ մէջը:

— Կաթ էլ:

Մահմէդը ընկերոջը նայեց, աչքերը նրա մեծացան փափագից, քթի ծակերը լայնացան ու վերի շրթերունքը բաժանեց ցածինից. ակտրժակը խիստ զրգուել էր:

Ծախողը մի քայլ արաւ գնալու: Մահմէդը անձկանօք նրան նայեց և սակառին: Շիրինը տեսաւ այդ, մի վայրկեան կնճռեց ճակատը, յետոյ դարձաւ ծախողին ու ասաց կտրուկ ձայնով.

— Մէկը քանի:

— Հինգ կոպէկ, պատասխանեց ծախողը և կանգ առնելով՝ կիսովին դարձաւ: Կարծեց որ առնելու էին:

— Բ՛նչ. բացականչեց Մահմէդը իսկոյն. անյետացաւ դէմքի անձկալի արտայայտութիւնը— այդքան թանկ, կրկնեց նա, յետոյ մուրճը ձեռքն առաւ և մեղմ ձայնով աւելացրեց:

— Ձեմ ուզում, գնա. դէհ, գնա էլի:

Հաց ծախողը նրան նայեց մի քիչ, յետոյ՝

— Գնում եմ էլի, ասաց— ինչո՞ւ ես բարկաւորում:

Հեռանալ սկսեց:

— Երեք կոպէկով չեմ տալ, գոռաց նրա ետեւից Շիրինը:

— Ո՛չ, չեմ ուզում, թող դնայ, վրայ տւեց Մահմէդը, կատաղութեամբ մուրճը քարին խփելով:

— Ո՛չ, պակաս չի լինիլ, գոռաց հաց ծախողը, որ հեռանում էր:

Նա գնում էր դէպի դիմացի տունը, երեւի այնտեղ նստող առտիճանաւորին սուրճի համար հաց տալու:

Շիրինն էլ էր տաքացել և բարկութեամբ իւր մուրճը քարի կտորներին էր խփում. Քիչ յետոյ դարձաւ և նայեց Մահմէդին. յետոյ հաց ծախողի ետեւից գոռաց.

— Երկուսին եօթը կոպէկ տամ, բեր:

Այս անգամ Մահմէդը ձայն չհանեց: Հաց ծախողը հեռացաւ և մտաւ մեծ տան մէջ:

—Արդեօք ովքեր են ուտում այդ տեսակ հացը, խօսեց Մահմէդը:

—Ովքեր, պատասխանեց Շիրինը—շատ պարզ է, աստիճանաւորներ և հարուստներ:

—Մոռացաւ կրօնաւորները, մտածեցի ես:

—Իսկ մեզ պէս աղքատները, շարունակեց Շիրինը—դրա համեմ էլ առնելու իրաւունք չունին:

—Հինգ կոպէկ. մոմօաց Մահմէդը—ինչքան էլ փոքր էր, մի բրտուճ կարելի էր անել միայն: Այսեցին պահ մի լուռութեամբ քար ջարդել, որից յետոյ Մահմէդը նորից խղեց լուռութիւնը.

—Քաղցած չեմ, հարցրեց նա Շիրինին:

—Ուտենք:

Մուրճերը ցած դրին. Շիրինը վերցրեց կարմիր թաշկինակով կապած հացը, բաց արաւ, տարածեց քարերի վրայ և սկսեցին հաց ուտել:

Միայն ցամաք հաց էր, Ահմէդը ակորժակով էր ուտում և յաճախ նայում էր դէպի աստիճանաւորի տունը, ուր մտել էր բուլկի ծախողը:

—Տեսնես ինչ իւղով կը լինի շինած, ասաց նա մէկէն, —կարագով:

—Գժւե՛լ ես, պատասխանեց Շիրինը—կարագ իւղով էլ հաց կը թխեն... դմակ իւղով կը լինի:

Եւ լռեցին: Շոգը սաստիկ էր. անցուդարձը

դադարել էր. երբեմն միայն ցածի փողոցից երևում էին եղան սալեր:

—Մեր երկրում այդպէս բաներ չեն թխում, ասաց նորից Մահմէդը:

—Այո, բայց ուրիշ աւելի լաւ քաղցրեղէններ կան. միտք չէ՞ թէ Նովրուզի օրը ինչեր չեն լցնում խանութներում. ինչ վախլաւաներ, ինչ լոխումներ:

—Բայց մեք—դիւղացիներս—խօսեցինք բաների համը չենք տոնում. դրանք քաղաքացոյց համար են:

Շիրինը քիչ լռեց, յետոյ մէկէն ի մէկ ասաց.

—Իսկապէս, Մահմէդ, կ'ուզես մի հատ առնենք:

—Ձէ, չէ, շտապեց պատասխանել Մահմէդը—օրական 45 կոպէկ աշխատանք անենք, դիժ խօսքով որ 5 կոպէկ փողը մի բրտուճ հացի տամ... բաս պարտքերս ով տաց, արդիներին ով կերակրէ: Լռեցին: Մահմէդի տրամաբանութիւնը էլ առարկութիւն վերցնել չէր կարող ըստ երևոյթին:

Կերան ինչ որ կար: Շիրինը թաշկինակն թռթափեց, կոխեց ծոցը, յետոյ կռանն առաւ ու ասաց.

—Դէհ, վերջացնենք, քիչ մնաց:

Հաց ծախողը երեւի ուրիշ կողմով էր դուրս գնացել աստիճանաւորի տնից և կամ թէ հէնց նրա տակի մառանու մէջ էր բնակւում: Նրէկ ես նկատել էի որ այդ մառանում կանաչք և մանուկներ կային:

—Երեւի լաւ առեւտուր ունի... հ^օը, Շիրին,
հարցրեց դարձեալ Մահմէտը:

—Ի հարկէ. հատը 5 կոպէկով որ օրական
20 հատ ծախէ, այդ քեզ մի բուրլի. քիչ փող է:

—Լաւ աշխատանք է, Ասուաժ վկայ... մեր
մի երկու օրեայ աշխատանքը:

Այդ միջոցին բարեկամիս ծառան դուրս եկաւ
պատշգամ և ասաց ինձ.

—Աղա, խորովածը պատրաստեց, համեցէք.

—Երանի այդ հարուստներին, ասում էր ցա-
ծում Մահմէտը—այդպէս լաւ հացեր են ուտում
միշտ...

—Ու այսպէս էլ արեւի տակ չեն այրւում...
աւելացրեց դառնութեամբ Շիրինը և սրբեց ճա-
կատից ծորող քրտինքը:

Վերկացայ ներս մտնելու:

Վերջին խօսքը որ լսեցի, դա Մահմէդի խօս-
քերն էին, միացած մի խոր հառաչի հետ:

—Է՛հ... ասում էր նա խորին տխրութեան
շեշտով—երեւի մեր ճակատագիրն այդ է... տեսնել
և չկարողանալ վայելել:

ԹԵԹԵՒ ՀԱՃՈՅՔՆԵՐ

(Մի թիւրքահայ եպիսկոպոսի նամակից)

...Ուզում ես որ քեզ մի բնորոշ դէպք պատ-
մեմ քրդերի բարբարոսութիւններից, որդիս: Պատ-
մեմ, բայց երեսդ չծածկես ամօթից, երբ այդ պատ-
մածից հաչի ստրկական, գծուծ վիճակը պատկերա-
նայ առջևդ: Մի, որդիս, դարերի ընթացքում,
հարիւրաւոր հանգամանքներ այնքան են ճնշել թըշ-
ւառ ժողովրդին, այնքան են ճգմել, որ մարդ նրանց
մէջ հազիւ է կարողանում արժանաւորութիւն տես-
նել... Թշւառ են, թշւառ, այսքանը քեզ կ'ասեմ
և քեզ մի իրողութիւն է որ կը պատմեմ...

«Հայոց-ձորում» մանգալուս ժամանակ, մի երե-
կոյ գիշերեցի Խորգում գիւղը: Գիւղացիներից ամե-
նահարուստը հիւրասիրեց ինձ: Ընթրիքից յետոյ
փափագ յայտնեցի զնալ բացօդեայ Լոնջայի տեղը
և քիչ խօսակցել հաւաքւած գիւղացիների հետ:
Բայց աշնանային մի անձրև էր սկսել և սպառնում
էր սաստկանալ:

Ստիպւեցինք մտնել Լոնջայի ախոռը: Այնտեղ

սխալեց մի խօսակցութիւն, որ յաճախ համեմտում էր երգերով: Մերունինները և քահանան շրջապատեցին ինձ, երիտասարդները սկսեցին մեկամաղձոտ լէլէներ կանչել. մի զփգոյն լոյս լուսաւորում էր ախոռը: Մեկամաղձոտ էր նաև սրնգի ձայնը որ խառնւում էր մութ անկիւնում որոճող կովերի բառաչների հետ:

Անձրեւ ստատկանում էր և ծեծում ախոռի տանիքը, երթիկիցն էլ կաթիլներ էին ներս թափւում և թրջում գետինը: Մենք նստել էինք մի տեսակ սաքիւլի վրայ, որը յատկապէս շինւած է լինում Հայաստանի ախոռներում ձմեռաց նիստերի համար: Ախոռի հոտը անտանելի էր, բայց ես վաղուց սովորել էի դիմանալ:

Նրգում էին, խօսակցում. ինձ խնդրեցին մի բան պատմել Ս. գրքից և խօսակցութեան քաղցր տեղումն էր, երբ ախոռի դուռը ուժգնութեամբ բացւեց և մի գիւղացի հեալով ներս ընկաւ: Ամէնքը կիսովին բարձրացան տեսնելու նրան:

— Թելօն գիւղի մէջն է, ասաց եկողը մօտենալով, — Գասպարենց տանը...

Ես հրաժարւում եմ գիւղացոց յուզումը նկարագրելուց: Մերունինները սկսեցին հառաչներ արձակել, երիտասարդները խումբ կազմեցին և ռէսը շարած չգիտէր ինչ անել: Այդ բոլորը ինձ անհասկանալի էին:

— Վերջապէս կ'ասէք ինչ է եղել, հարցրի ես.

Ախոռը սկսեց դառարկել. ռէսը դուրս գնաց, երգասարգները հետեւեցին նրան, իսկ քահանան աշխատեց բացադրել ինձ եղածը:

Թելօն Հայոց-Ձորի մի յայտնի քիւրդ ցեղապետ էր, որ ձանձրութեան հիւանդութիւն ունէր. իր ձանձրութիւնը փարատելու համար նա սիրում էր անդադար հայոց գիւղերը մտնել և գիւղացիների գլխին զանազան արջալին կատակներ անելով զարձանալ: Մարգասպան չէր, չէր էլ թալանում, բայց աջնայիտի հրէշային խաղեր էր խաղում, որ գիւղացիք, թէև վարժած այդ խաղերին, նրա ամէն երևելու ժամանակ զոզում էին աւելի քան մի կողոպտողից կամ մարդասպանից:

— Ելի ձեզ գիտէ ինչ խաղեր պիտի հանէ Գասպարի գլխին, վերջացրեց քահանան մի խոր ախաբաշխով:

— Մենսիմ քրդի, սրբազան, զիմեց ինձ մի ծերունի — մի ճար էք կարող անել՝ մեզ այդտեսակ անօրէններից ազատելու համար:

— Մենսիկ է գալիս միշտ, հարցրի ես.

— Մենսիկ, զոչեց քահանան — վեց ձիււոր ունի հետը, ոտքից մինչև գլուխ զինւած:

— Ո՞ր ցեղի ցեղապետն է:

— Ջալալցոյ. կառղած շների մի խումբ է, յարեց ծերունին — 500 հոգի են և թաղաւորների պէս են ապրում... մեր ունեցածներով... Կառավարութիւնը անցեալ օրերը եկաւ մեր վերջին դանակն անգամ

հաւաքեց, իսկ դրանց ոչ մի զէնքին էլ չդիպաւ...
 Բայ, Բայ, հր մէկն ասեմ, սրբազան.

—Այն ժաւանակ ինչու չէք գանգատում վա-
 լիին:

—Ե՛հ, սրբազան, շարունակեց մի ուրիշ ծե-
 րունի—տաս անգամ ե՛ք գանգատել. գիտե՞ս ինչ է
 ասում մեզ վալին.

«—Ի՞նչ է Թեւոթի արածը, ասում է նա—սպա-
 նում է ձեզ. —հէ. Թալանում է—ուչ, ձեր կնիկներն
 է խլում, ձեր եկեղեցիները պղծում է.—ուչ. էլ ինչ
 էք ուզում ուրեմն. մի բարի ու զարմասէր մարդ
 է երևում այդ քիւրդը, որ մի քիչ էլ խենթ է...
 զնացէք, զնացէք, ինչ անհանգարտ ժողովուրդ էք
 եղել, մարդ հանաք էլ չէ կարող անել...—ահա,
 սրբազան, վալիի ասածը... Էհ, բայց, միթէ կար-
 ծում ես որ կառավարութեան պաշտօնեաները
 Թեւոթիից լաւ ե՛ն:

Ես յուզւել էի. մարդ դիւրազգած է լինում
 Հայաստանի մէջ. քիչ էր մնում լաց լինէի լսելով
 ծերունու տխուր և դողդողուն զանգատը:

—Այո՛, սրբազան, քրդիկ ղուրբան—շարունա-
 կեց նա մի րոպէ լռութիւնից յետոյ—մենք ստիպ-
 ւած ենք այդ բոլորը տանել, մեզ մի կտոր զէնք
 չեն թողնում, իսկ այդ շներն այնքան զէնք ունին,
 որ տէրութիւնն ինքն էլ չունի...

Ես ցանկութիւն յայտնեցի գնալ Քասպարենց
 տուն և ամեն ինչ տեսնել. չգիտեմ ինչո՞ւ. միթէ

կարծում էի թէ պիտի կարողանամ մեղմացնել
 աւազակի սիրտը. Աստուծոյ խօսքերը ունի՞ն այն-
 քան ոյժ այդպիսի սրիկաների ձեռքից մեր Թշւառ
 եղբայրներին ազատելու համար...

—Աման, սրբազան, արգելեց ինձ քահանան—
 մի գնալ. Թեւոթի կրօնաւոր—բան չի իմանում. ան-
 ցեալ տարի այս մօրուքիցս էր որ բռնեց և զիւղի
 մէջ տեղում գետնի վրայ քարշ տւեց...

—Ուզում եմ տեսնել, պնդեցի ես—այնպիսի
 մի տեղ չի լինիլ, որից ես կարողանամ տեսնել և
 չտեսնել:

Հիւրընկալս ծոծրակը քորեց, քիչ մտածեց,
 յետոյ վերկացաւ և ասաց.

—Որ այդպէս է, դնանք. բայց, Աստուծոյ
 սիրուն, Սրբազան, հանգիստ կաց տեղումդ, թէ չէ
 Թեւոթի շները մեզ բոլորովին կը կոտորեն մէկ-մէկ:

Կտուրից կտուր առաջնորդեց նա ինձ Քասպա-
 րենց տան մօտ, մի փոքրիկ քանդակաւորից ներս
 մտաւ մի մանուկի պէս տեղ, յետոյ զգուշութեամբ
 բաց արաւ մի ծակ և ասաց աղաչանքով.

—Թէ մեռնիմ, Սրբազան, ձայն չհանես:
 Բացւած ձեռքից ճրագի լոյսը ներս թափան-
 ցեց. հիւրընկալս դողդողալով աշխատում էր թւե-
 րիս արանքներից ինքն էլ ներս նայել:

Ես մօտեցայ ձեռքին և սկսեցի նայել:
 Ներսում—մի կլոր մեծ խրճիթի մէջ—ուր
 զրւած կար գիւղացու ունեցած չունեցածը—կանգ-

նել էր մի բարձրահասակ քիւրդ՝ անձրեւից լաւ
թրջւած: Մի անկիւնում կուչ էին եկել մի կին և
մի քանի մանուկներ, իսկ տանուտէրը զողողալով,
աչքը քիւրդին յառած՝ սպասում էր մի զոհի պէս:
Խեղճ մարդը մեռելի պէս գունաթափ՝ զողում
էր, գաղտագողի անհանգիստ ակնարկներ ձգում կնոջ
վրայ և երբեմն էլ զօան նայում, թէ և լաւ զիտէր
որ այնտեղ, բացի Թելօին ընկերացող վեց քիւրդե-
րից, ոչ ոք չէր լինիլ:

Սենեակի մէջ տեղում զիզւած վառւում էր
մի խարոյկ. նրա բոցը մինչև բաց երթիկն էր բար-
ձրանում:

— Լաւ կրակ, մեմնում էր քիւրդը—այժմ
պէտք է հազուստներս չորացնել:

Սաաց և մի առ մի հանեց վրայից հազուստը.
յետոյ միակ սպիտակեղէնով անցաւ տանտիկնոջ առ-
ջևից, որը զողնոցով դէմքը ծածկել էր, եկաւ
կանգնեց զիւղացու առջև և, մի չարանենդ ժպիտ
դէմքին, ասաց խստութեամբ.

— Գեաւուր, նստելու աթոռ չունիս:

Տանուտէրը նրան պարզեց մի խարսուլ նստա-
րան:

— Փնէ, բացականչեց Թելօն նստարանը ձեռք
առնելով—այս աթոռը կը դիմանայ Թելօին:

Եւ օդի մէջ տատանելով աթոռը՝ այնպէս
ուժգնութեամբ նետեց դէպի մութ անկիւնը, որ
այնտեղ եղած երկու կարասներ ջարդւեցին ու

նրանց միջի ջուրն ու թանը միմեանց խառնւելով
առւակներ կաղմեցին ու սկսեցին դէպի թոնիրն
հոսել:

— Ել ուրիշ աթոռ—աւելի լաւ—չունիս
գեաւուր:

— Չկայ ազա... թոթովեց տանուտէրը մե-
ռածի պէս:

— Անշնորհք են այս գեաւուրները, մեմնաց
քիւրդը—ուրեմն ես ինչի վրայ նստեմ:

Սչքը չորս կողմը յառեց, փորձեց ցորենի տու-
րակը խարոյկի մօտ քաշել. չկարողացաւ, յետոյ
յանկարծ կանգ առաւ, չարամոռութեամբ ժպտեց,
ծանր քայլերով տանուտիրոջ մօտեցաւ և ծիծա-
ղելով ասաց.

— Գեաւուր, չէ որ Թելօն քո հիւրն է, մի
բան գտիր, որ Թելօն նստի նրա վրայ և հազուստ-
ները չորացնէ:

— Այնչ չունիմ, աղա:

— Անքողաքավարի ես... հիւրի համար ամեն
բան յանձն կ'առնեն, այ, մօտեցիր կրակին, քեզ ասեմ:
Տանուտէրը մօտեցաւ:

— Հիմա, ասաց քիւրդը միշտ ժպտելով—ձեռ-
քերդ երկուսն էլ դետնին դիր:

Տանուտէրը շփոթւած նրա երեսին նայեց:

— Դիր, գեաւուր, գոչեց քիւրդը խփելով
նորա ծոծրակին: Հաղիւ թէ տանուտէրը հնա-

զանդուել էր, որ քիւրդը մի ոստիւնով թռաւ նրա մէջքի վրայ և քրքրջալով ասաց.

— Տեսա՛ր աթոռ... հանդիստ կաց մինչև հագուստս չորացնեմ:

Այդպէս նա նստած տանտիրոջ մէջքի վրայ սկսեց մի առ մի չորացնել թաց հագուստները:

Ահա ժամ տեւեց այդ գործողութիւնը, մարդ—նստարանը անդադար ձեռքերը կամ ոտները կքու՛մ էր. այդպիսի դէպքում թեյօն ոտերովը ուժգին հարւածներ էր տալիս նրա փորին կամ գլխին և գոչում էր սպառնալից.

— Հը՛ր՛... շարժուն նստարան չեմ սիրում...

Երբ գործողութիւնը վերջացաւ, քիւրդը ելաւ իւր նստարանի վրայից, թոյլ տւեց նստարանին հանգստանալու և—

— Շնորհակալ եմ ասաց—բաւական հանգիստ մէջք ունիս...

Յետոյ հագաւ շորերն և կերակուր պահանջեց: Նրան ձեռնադ տւին. խալտեց, ոտքի ելաւ, հրացանը առաւ և դառնալով տանտիրոջ՝ գոչեց՝

— Գեաւոր, ձի չունի՞ս, դուրսը շատ ցելս է, անձրեւն էլ գալիս է հեղեղի պէս:

— Ո՛չ, աղա՛, պատասխանեց գիւղացին հեռով:

— Իսկ է՛շ կամ ջորի:

— Ձունիմ...

— Անշնորհք, անշնորհք... ուրեմն հիւրդ պէտք է ոտքով գնաց... մի ձի գտիր ինձ, հիւրասիրութիւն

չե՞ս իմանում, դաս իմ տունս՝ քեզ տաս հատ ձի կը տամ հեծնելու... մի՛ հեծանելիք գտիր...

— Որտեղից գտնեմ, աղա՛:

Քիւրդը նորէն չարամտութեամբ ժպտեց:

— Իսկ սանձ, ձիու կամ էշի սանձ էլ չունի՞ս:

— Մի հատ կայ:

— Գնա բեր ինձ:

Տանուտէրը ախուր մտաւ և այնտեղից քիչ յետոյ դուրս բերեց մի էշի սանձ. քիւրդը առաւ սանձը, քննեց, լարեց, յետոյ ժպտելով գիւղացուն դարձաւ և ասաց.

— Սկի գայլերի հանդիպե՛լ ես...

Գիւղացին ոչինչ չհասկացաւ, զարմացած նրան նայեց.

— Պատասխանի՛ր, գեաւոր, գոռաց քիւրդը—

Թեյօն չի սիրում որ լռեն, երբ հարցնում է:

— Ձեմ հասկանում, աղա՛, կմկմաց գիւղացին:

— Ձե՞ս հասկանում իմ լեզուն, անհաւատ...

Թեյօն լեզուն ամենքը պիտի հասկանան. ես ասում եմ թէ սկի գայլերի հանդիպե՛լ ես դաշտումը կամ լեռներում:

— Հանդիպել եմ:

— Ի՞նչ միջոց ես գործ դրել նրանցից ազատւելու համար:

Գիւղացին հասկացաւ:

— Շան նման չորս ձեռքերիս վրայ կանգնել,

ասաց նա—ետեի ոտքովս պոչ եմ ձեռքերէ և զլսիս փափախովը շան զլուխ...

—Յետոյ, ծիծաղեց քիւրդը:

—Հաջելով նրանց վրայ եմ յարձակել և փախցրել...¹⁾:

—Ապա, ասաց քիւրդը—մէկ արա տեսնեմ:

Գիւղացին նորէն երկու ձեռքերը գետին դրաւ և ծնկները ծախեց: Թելօն ժպտելով մօտեցաւ նրան, ձեռքը բռնած լարւած սանձը արագութեամբ նորա բերանը ձգեց, թռաւ մէջքի վրայ, մի բարձրաձայն ծիծաղ արձակեց և դուրս ելաւ:

—Տեսա՞ր, գեաւու՛ր, տեսա՞ր թէ Թելօն ինչպէս կարող է հեծանելիք գտնել... դէհ, առնջ գնա և ինձ տար մինչև մեր գիւղը:

Գիւղացին ապշած մնացել էր, տեղիցը չէր շարժուում:

—Դէհ, գեաւու՛ր, ինձ մի սպասեցնիլ, դռնեց քիւրդը և սկսեց հրացանի կոթովը ծեծել գիւղացուն, որը չորս ձեռքերի վրայ և այդ բեռան տակ ճնշւած՝ քայլեց դէպի դուռը...

Չկարողացա՞յ դիմանալ, ձեռքս պարզեցի մի երեւակայական գէնք խլելու, վեր թռայ, ուղեցի յարձակել, դուռաւ... բացցի մի ձեռք փակեց բերանս և զգացի որ ինձ դուրս քաշեցին: Ուղեցի աղա-

¹⁾ Գիւղացիք, գալլի հանդիպելիս՝ լաճախ այդպիսով աղաատում են:

ղակել... անձրեւը աստիկ հոտում էր, զլխարկս ընկաւ... հինգ րոպէից յետոյ ինձ քարշ տւին քահանայի տունը գրէթէ կիսամեռ վիճակի մէջ:

Մի սոսկալի գիշեր էր որ անցաւ:

Միւս օրը ինձ պատմեցին որ գիւղացիք հետեւել էին Թելօին և իր հեծանելիքին մինչև գիւղից դուրս. քիւրդը ճանապարհին իր ատրճանակի կոթով ստիպել էր գիւղացուն՝ առաջ գնալ այդ ցեխոտ և քարոտ ճանապարհի միջով... վերջ ի վերջոյ գիւղացին ուշքից է գնում: Թելօն թողնում է նրան, հրացանի կոթով մի քանի հարւածներ էլ տալիս և ծիծաղելով հեռանում:

Հետեւող գիւղացիները վերցնում են Դասպարին և գիւղը բերում: Նրազ էր թռում ինձ այդ բոլորը:

Մեկնեցի Խորգոմից: Տաս օր յետոյ Վանում առիթ ունեցա՞յ փաշային տեսնելու, և երբ յուզմամբ պատմեցի նրան այդ բոլորը, նա լսեց ինձ, յետոյ յանկարծ սկսեց գփի պէս ծիծաղել:

—Վայ, դիտեմ, գիտեմ, ասաց նա—վայ չարածճի Թելօ... ես լսել էի որ նա մի շատ կատակաբան քիւրդ է... Աստուծ վկայ, նա մեզնից բաղդաւոր է, կարողանում է գոնէ հաճոյքներ վայելել:

Կարմրեցի բարկութիւնից:

—Ինչպէս, դռնեցի ես—հաճոյք...դրանց դուք հաճոյքներ էք անւանում:

Փաշան ինձ նայեց և, անշուշտ կամենալով քիչ մեղմացնել արտայայտութիւնը, աւելացրեց ժրպտելով՝

—Թեթև հաճոյքներ, էֆէնդըմ, ՚ի հարկէ, երեսխալական հաճոյքներ...

Ա Յ Ի Շ Ա

(Պարսկական պօէմա)

Լսում են պատմիչին: Կկզած, նստոտած զսնազան անկիւններում՝ ականջ են դնում: Պատմիչը յուզւած է: Նստում է նա, կանգնում, բարձրացնում է ձեռքի փայտը: Եւ նրա ձայնը դողդողում է, կերկերում:

Նա պատմում է:

«Պէտք է որ գեղեցիկ լինի մարգարէի դրախտը—ասում է նա, բայց գեղեցիկ է նաև Շիրազի հովիտը:

Որքան առատ են այնտեղ վարդի թփերը, նրանց շուրջը պտոյտ գործող սոխակները. որքան քաղցր՝ նրանց դաշլալիկները: Որքան սողոսկող վճիռ առւակներ կան այնտեղ. հովիտն ակոսող և խորհրդաւոր միայնութեան մէջ ընկղմած բլրակները քանի քանի շքեղ անկիւններ ունին...

Պարզւում է ահա լալն հովիտը, զարդարւած է երփներանգ ծաղիկներով, բծաւորւած՝ վարդի թփիկներով: Հողային բլրակների մի խումբ դէպի դաշտն է խոնարհել, մէջքը ցից լեռներին տւել, կուրծքը կաթնահամ ջրերի մէջ թաթախել և ստորոտը շքեղ անտառներով զարդարել:

Վարդի և սոխակի երկիր, սիրելու և երազելու անկիւններ, ծաղիկների հոտով բացւող վայրեր, արդեօք քո ծոցումը չէր, որ առաջին մարդը սիրեց... և տանջւեց...

«Այդ սքանչելի բլրակների մէջ էր, որ տարիներից 'ի վեր, վտակների հոսելուց՝ կաղմել էր Թոքնաբաղ գետը, և Թոքնաբաղը յերկար գնալ-հոգնելուց յետոյ՝ ձևացրել էր մի շքեղ առաղան։

Տարիներից 'ի վեր ջրերը մի ծոց էին գտել, գումարել ու կուտակել, հրաւիրել ընկերներին, իրենց մեղմ կարկաչիւնով գրաւել ու մեծացրել էին շրջանը և կանչել առաղանի մօտ սոխակներին, որոնք հովտի վարդերի սիրուց տոգորւած, նրանց փշերից ծակծկւած, սովորել էին դալ և հովանալ այդ ջրերի մէջ։

Դաշտի թռչունները, սուլացող քամին բերին իրենց թռերով վարդի սերմեր, փռեցին առաղանի շուրջը. վտակները կշտացրին նրանց իրենց ցատկոտող կաթիլներով և քիչ յետոյ վարդէ մի պտակ էր, որ կաղմել էր առաղանի շուրջը. պտակ, ուր հաւաքւում էին սիրատար սոխակները, ուր սիրում էին և տանջւում սիրուց։

Լցւում էր առաղանը, կեանք տալիս շրջակայքին։ զետը սահում գնում էր նրա երեսի վրայից. սոխակները երգում, թռերով բաղխում նրա ջրերի

մակերեսութը և խաղում նրա վէտ-վէտ ալիքների հետ։

Դեռ ոչ մի մարդ չէր խանդարել այդ լռիկ անկիւնը իր պիղծ ոգով, կործանիչ շնչով։

Բնակւում էին հովիտում լեռանց ոգիներ։ Զքնաղ հիւրիներ էին նրանք։ Մի աննման էլ թագուհի ունէին։

Նայեցէք գիշերով լեցուն լուսնին, ցերեկով՝ շքեղ արեւին։ Մտէք մարգարէի դրախտը խուզարկէք, Քրիստոսի արքայութիւնը տալիս ու վրայ արէք. բնութեան գեղեցկութիւնները 'ի մի ձուլեցէք. բաց բոլորի մէջ ոչինչ չէք գտնիլ նման Այիշայի վառ գեղեցկութեան։

Նրա աշխոյժի առջև սառցակոյտ էր հալւում և սոխակները ջաճախ նրան մի աննման վարդ կարծելով՝ պար էին բռնում նրա շուրջը, օդը լցնում իրենց բոցավառ սրտից բղխած խանդոտ դաշլալով։

Ամէն ինչ խոնարհւում, հալւում էր Այիշայի գեղի առջև. բնութիւնը ողջ սպառն կտրած՝ արձանանում էր, երբ Այիշան նրա միջոյն անցնում էր...

Այդպէս էր նա, որ սիրում էր երբեմն դուրս գնալ, իր գեղի առջև խոնարհւած սրտեր տեսնել և զարճանալ։ Յաճախ միայնակ պտոյտ էր գոր

ծում Շիրազի հովտում, թափանցում մինչև ամենախուլ անկիւնը:

Եւ ահա մի օր դէմ առ դէմ եկաւ աւազանին: Կանգ առաւ Զմայլելի ոչինչ չկար շատ. բայց որքան խոր էր նրա յատակը և արդեօք որքան հետաքրքիր կը լինէր թափանցել նրա մէջ, տեսնել ջրակոյտի մի առատ հոսանք:

Երկար ժամանակ էր որ նա վառ ու բուռն հոսանքներ չէր տեսել: Բայց նա սիրում էր այդ—վառ գոյներ, արտայայտութիւններ...

Տեսնել օրինակ մի կրակ, որ մի քանի բոպէի մէջ բուռն կերպով լափում է մի մեծ չէնք: Բոցը սուր լեզուակներ կազմած՝ սուրում է դէս ու դէն, վառում են քարեր, փլում պատերը, հալում դղրդում է դետինը, փոշին ու կրակը խառն՝ փոթորկի պէս կործանում են ամեն ինչ և ապա, մի բոպէից յետոյ... էլ ոչինչ: Վերջանում է ամեն ինչ: Կրակից մնում է միայն մի կոյտ, որ թէև պլպլում է, թէև դեռ փայլում, բայց հանդիստ է, ողնած և կիսամեռ... շուտով կը մեռնի, այլ ևս ոչինչ հետաքրքիր բան չունի իր մէջ:

Գեղեցիկ հիւրին մտածում էր այդ բոլորը: Աւազանի միակերպ ալիքներն էր դիտում. ձանձրալի գառաւ հոսանքը, այդ միակերպ շարժումը:

Զիորձել արդեօք մի ծակ բանալ ներքեւից, լայնացնել նրան, յետոյ թողնել որ թումբը տակից մաշւի, փլչի. ջուրը հոսի, գետինը բռնչայ, փրփրի,

յատկոտի, փոշու սիւնեակներ կազմի, անհամար շատրւաններ ձևացնի. ողողի ամեն ինչ, վշշշայ, ոռնայ, սուլի ու զուռայ...

Որքան մեծ տեսարան կը լինէր այդ:

Եւ փնտռեց նա մի անկիւն, ուր փուխը լինէր հողը: Իջաւ և փորեց: Տեսնալին յուզումով պեղում էր նա: Սոխակները զգալով կործանումը՝ ճչում էին, վարդի թփիկները արմատներով դողում:

Քանի փորում էր, այնքան հանդարտում էր նա: Բոպէներ եղան, որ նա կանգ առաւ: Այն միտքը որ գուցէ հեաւանքը վատ լինէր—երբեմն կասեցնում էր նրան: Արդեօք արածը չէր կործանիլ, չէր ոչնչացնիլ ամբողջ աւազանը:

Բայց ոչ—մտածեց նա—ի՞նչ պիտի լինի: Մի քանի ժամ բուռն հոսանք, յետոյ ամեն ինչ կը վերջանար. հոսող վտակները էլի կը լեցնէին նրան: Կը փակէր նորից անցքը, ջրերը էլի մի անգամ կը լցէին և կը սարսէր նրա պատերը նորանոր յուզմունքներից:

Իսկ աւազանը շատ լիքն էր. ինչ որ լիքն է, նա դատարկւելու էլ պատրաստ է: Վաղուց նա արդէն կռծում էր իր յատակը և մի անցք փնտռում ժողոված խանդը դուրս տալու:

Պատերը կակղել էին. հեղուկը հոսել էր ուղում. կաշկանդւած ոյժը ազատութիւն էր փնտռում:

Կ'ուղենար նա հոսել, հոսել, գգւելով ու ցօղելով
ամեն ինչ, ժպտելով արեգին, խնդալով կեանքին...

Պեղում էր Այիշան: Ճշում էին սոխակները,
ցնցում վարդերը:

Ահա յուզւեցին ջրերը. ահա կազմւեց յորձանք,
զողաց աւազանը, սարսեցին պատերը: Լսում էր
մի խուլ մումռոց, որ հետզհետէ աղմուկի էր փոխ-
ւում:

Այիշան գունատում էր. աղմուկի փոխուող
մումռոցը նրան վախ պատճառեց: Ջրերի շարժու-
մը, որ զղրդեցնում էր իր շրջանակը, պահ մի կա-
սեցրեց նրան: Նա կանգ առաւ—ետ քաշւեց:

...Բայց որքան հրաշալի կը լինէր տեսարանը,
եթէ հոսանքը մէկէն ի մէկ դուրս ցայտէր: Հսկայա-
կան մի շատրւան, որ հովահարածէ կը տարածէր
դէպ առաջ, կը թրջէր—կ'ողողէր ամեն ինչ և խուլ
մունչիւնը դաշտը կը թնդացնէր:

Որքան սիրուն տեսարան կը լինէր այդ:

Տեսնել թէ ինչպէս աւազանի մէջտեղը գոգա-
նում է, ջրերը միմեանց ծեծելով կենդրոնանում են
մի շրջանի մէջ, արագութեամբ պտոյտ գործում,
դնում են, վիժում, ոստոստում, ցայտում...

Եւ յուզւում էր նրա կուրծքը. բուռն ցանկու-
թիւնը զողացնում նրան: Պեղելու էլ պէտք չկար.
ջրերը միմեանց հրելով լայնացնում էին բացւածքը,
պեղում ու վիժում:

Մի հարւած ևս... և նա ետ ցատկեց:

Մի անդ մունչիւն ու մի մեծ շաղրւան աչն-
քան արագութեամբ յաջորդեցին միմեանց, որ կարող
էին մի բերդ կործանել:

Ղղրղում էին լեռներ, ողողւում է դաշտը:
Յորձանք էր կազմւել, խաօսն էր սկսում, մի կաթիլ
անգամ հանդարտ չէր մնում: Ամենքը միմեանց բաղ-
խում, իրար հրմըշտըկում և ճեղքւած անցքիցը դուրս
էին թռչում:

Այիշան սառեց: Հզօր տեսարանը քարացրեց
նրան: Իսկ ջրերն մունչում էին, վիժում ու վիժում.
դաշտն էլ նրանց ծծում—անհետացնում էր և թըշ-
ւառ աւազանը կաթ կաթ դատարկւում:

Մի քանի րոպէ—էլ ոչինչ չմնաց, եթէ ոչ՝ մի
սառն ու տխուր, անգոյն թացութիւն:

Այիշայի առջև կանգնած էր նրա հաճոյքի
զոհը, որ իր վերջին կաթիլներն էր քամում...
միշտ ցատկաւող, միշտ էլ յուզւած՝ վճիռ կաթիլներ:

Ու փուլ եկան աւազանի պատերը. Թոքնաբաղը
ետ քաշւեց, վարդերը տխրագին՝ կռացան և ար-
տասւթաթախ՝ մեռան փլատակների վրայ...

Այն օրից Շիրազը կորցրեց իր ջուրը. գետը
չորացաւ, հովիտը մերկացաւ, սոխակները լռեցին,
վարդերն էլ նրանց սէր չը գրգռեցին...

Այս էր որ պատմեց պարսիկ պատմիչը, երբ
ես յօռեցած՝ լսում էի նրան:

Եւ երբ վերջացրեց, խոնարհեց գլուխը: Եւ
խիստ տխուր էր նա, դունաթափ, նկուն...

Պատմիչ, թշուառ պատմիչ, դու չէիր արդեօք
հաճոյքի այդ զոհը, քո սիրտը չէր արդեօք Շիրազի
հովտի փլած աւազանը...



20

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ:

Վաճառուով է «Մուրճ»-ի խմբագրատանը մի
տասնեակից ոչ պակաս, 20% (8-ական կոպեկ) զի-
ջումով:

Հատով՝ գրաւաճառների մօտ:

18960

2013

